

**«ԻՆ-ՎԻ» ՍՊ ընկերության  
Էլեկտրահաղորդալարերի և մալուխների  
արտադրության զարգացում» նախագծի**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ  
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ**

Rev03

Մեպտեմբեր 2022թ.



Հայաստան, Երևան, 0051  
Գրիբոյեդովի 11-1  
Բջջ.՝ +37499 109495  
info@atms.am  
www.atms.am



## Բովանդակություն

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
2.	ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	5
3.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ	6
3.1	Նախապատմությունը, նպատակը և հիմնավորումը	6
3.2	Հանրային ծանուցումը և քննարկումները	6
4.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ	7
5.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	11
5.1	Նախատեսվող գործունեության նպատակը	11
5.2	Արտադրական հրապարակի տեղադիրքը և կառուցվածքը	11
5.3	Ձեռնարկության հողատարածքը	11
5.4	Ձեռնարկության սանիտարապաշտպանիչ գոտին	13
5.5	Արտադրական գործընթացի նկարագիրը	14
5.6	Տեխնիկատնտեսական ցուցանիշներ	19
5.7	Արտադրական գործընթացի սարքավորումները և անձնակազմը	22
5.8	Նախատեսվող գործունեության ժամանակացույցը	25
5.9	Մթնոլորտային արտանետումները	25
5.10	Առաջացող թափոնները	26
5.11	Արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը	27
5.12	Կանաչապատում	27
5.13	Օդի պահպանություն	27
6.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	28
6.1	Դիտարկվող տարածչջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը, լանդշաֆտը և ռելիեֆը	28
6.2	Տարածաշրջանի երկրաբանությունը	28
6.3	Տարածաշրջանի հիդրոերկրաբանությունը	29
6.4	Սեյսմատեկտոնիկ պայմանները	30
6.5	Տարածաշրջանի հողերի նկարագիրը	32
6.6	Կլիման և օդերևութաբանական պայմանները	33
6.6.1	Ձերմաստիճանը	33
6.6.2	Խոնավությունը	33
6.6.3	Մթնոլորտային տեղումները	34
6.6.4	Քամի	34
6.7	Բուսական և կենդանական աշխարհը	36
6.7.1	Բուսական աշխարհը	36

6.7.2	Կենդանական աշխարհը.....	40
6.8	Հատուկ պահպանվող տարածքներ.....	43
6.9	Աղմուկի, թրթռման, օդի, ջրի և հողի որակի մշտադիտարկում.....	43
6.10	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակը.....	45
6.11	Պատմամշակութային և բնության հուշարձանները.....	47
7.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.....	50
7.1	Նպատակը.....	50
7.2	Մեթոդաբանությունը.....	51
7.3	Նախնական գնահատման արդյունքները.....	52
	Հավելվածներ.....	57

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1	Պատվիրատու՝	«ԻՆ-ՎԻ» ՍՊԸ
1.2	Ձեռնարկող՝	«ԻՆ-ՎԻ» ՍՊԸ
1.3	Ձեռնարկողի կոնտակտային տվյալները	
-	Հասցե՝	ՀՀ, ք. Երևան, Ծիրակի փող. 3-րդ նրբ., 5/1 շենք (Շենգավիթ վարչական շրջան)
-	Հեռախոս՝	+374-93-020902, +374-33-020902
-	Էլ. հասցե՝	<a href="mailto:vagtad@gmail.com">vagtad@gmail.com</a>
-	Կայք՝	<a href="http://www.cable.am">www.cable.am</a>
1.4	Գործունեության տեսակը՝	Էլեկտրահաղորդալարերի և մալուխների արտադրություն
1.5	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական հայտի մշակող՝	«ԷՅ ԹԻ ԷՍ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ
-	Հասցե՝	ՀՀ, Երևան, Գրիբոյեդովի 11-1
-	Հեռախոսը՝	+37491 497128, +37499 109495
-	Էլ. հասցե՝	<a href="mailto:info@atms.am">info@atms.am</a>
-	Կայք՝	<a href="http://www.atms.am">www.atms.am</a>

## 2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԲՊՄՄ	Բնության պահպանության միջազգային միություն
ՓԲԸ	Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՍՊԸ	Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետություն շինարարության նորմեր
ՀՈԱԿ	Համայնքային Ոչ Առևտրային Կազմակերպություն
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄԱՆԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատում
ՊՎԸ	Պոլիվինիլքլորիդ
ՄՆ	Սանիտարական նորմեր
ՄՊԳ	Սանիտարապաշտպանիչ Գոտի

### 3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

#### 3.1 Նախապատմությունը, նպատակը և հիմնավորումը

«ԻՆՎԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ «Ընկերություն» կամ «Զեռնարկություն») իր գործունեությունը մեկնարկել է 2011 թվականից: Ընկերության առաքելությունն՝ տնտեսության տարբեր ոլորտների համար բարձր որակի պղնձե և այլումինե մալուխների և հաղորդալարերի արտադրությունն ու մատակարարումն է:

Ներկայումս Ընկերությունը մասնագիտացված է պղնձե և այլումինե նախապատրաստվածքներից ձգման եղանակով էլեկտրական հաղորդալարերի ու մալուխների արտադրության ոլորտում: Ընկերության նպատակն է ընդլայնել իր տեխնիկական պարկը և կարողությունները՝ ապահովելով պղնձե և այլումինե էլեկտրական հաղորդալարերի ու մալուխների ամբողջ տեխնոլոգիական ցիկլի իրականացումը՝ ձուլման գործընթացից մինչև պատրաստի հաղորդալարերի և մալուխների պոլիէթիլենային/պոլիվինիլքլորիդային (այսուհետ՝ «ՊՎԶ») թաղանթապատումը: Տեխնիկական պարկի ընդլայնման արդյունքում Ընկերությունում կգործեն ձուլման միջոցով պղնձե և այլումինե լարերի (նախապատրաստվածք) ստացման, դրանց ձգման, ճկման, ոլորման, առաջնային հոււմքից պոլիէթիլենային կամ պոլիվինիլքլորիդային, ռետինե մեկուսացման ու գործիքային արտադրամասեր:

Ընկերության արտադրատեսակների հիմնական սպառողները կլինեն շինարարության, արդյունաբերության, էներգետիկայի, հեռահաղորդակցության, տրանսպորտի և այլ ոլորտների ընկերությունները, ինչպես նաև տնային տնտեսություններն ու պետական մարմինները: Ընկերությունը հագեցվելու է նոր տեխնոլոգիաներով և սարքավորումներով, որոնց շահագործումը ապահովելու են բարձր որակավորում ունեցող մասնագետները:

2014թ.-ի հունիսի 21-ի «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ կետի 5)-րդ ենթակետի համաձայն՝ մետաղների արտադրության և վերամշակման բնագավառում «Գունավոր մետաղների մշակում, ներառյալ՝ լեգիրացումը, արտադրատեսակների ռեկուպերացիան (գտում, ձուլածագործական արտադրություն և այլն)» հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

#### 3.2 Հանրային ծանուցումը և քննարկումները

«ԻՆՎԻ» ՍՊԸ էլեկտրահաղորդալարերի և մալուխների արտադրության զարգացում» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլում, Ծենգավիթ վարչական շրջանի շենքում՝ 05.05.2022թ.-ին, անցկացվել է հանրային քննարկում (1-ին հանրային քննարկում), որի ընթացքում քննարկվել է Ընկերության արտադրական գործունեության և տեխնիկական պարկի ընդլայնման, ինչպես նաև վերջինիս շրջակա միջավայրի վրա ազդեցության հետ կապված հարցեր: Վերջինիս հիման վրա, Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության կողմից տրվել է նախնական համաձայնություն՝ նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ, որը ներկայացված է սույն Հայտի **Հավելված 1**-ում:

#### 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական պահանջները սահմանված են 21.06.2014թ.-ին ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը** նկարագրում է Հայաստանում տարաբնույթ ծրագրերի և գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ «ՇՄԱԳ») և բնապահպանական փորձաքննության գործընթացները: Օրենքում օգտագործվող հիմնական սահմանումները բերված են հոդված 4-ում: Օրենքի հիմնական առարկաներն են՝

- Հիմնադրությամբ փաստաթուղթ՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագիծ:
- Նախատեսվող գործունեությունը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

Օրենքի հոդված 6-ը սահմանում է գնահատման և փորձաքննության նպատակն ու խնդիրները, իսկ հոդված 7-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը: Օրենքի գլուխ 2-ը (8-13 հոդվածները) նկարագրում են ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացի հիմնական մասնակիցների լիազորությունները:

Հոդված 14-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերի բնագավառները և նախատեսվող գործունեությունների տեսակները, որոնք ըստ ոլորտների դասակարգվում են «Ա», «Բ» և «Գ» կատեգորիայի՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող աստիճանի: Սույն հոդվածի 4-րդ կետի 5)-րդ ենթակետի համաձայն՝ մետաղների արտադրության և վերամշակման բնագավառում «Գունավոր մետաղների մշակում, ներառյալ՝ լեգիրացումը, արտադրատեսակների ռեկուպերացիան (գտում, ձուլածագործական արտադրություն և այլն)» գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և փորձաքննությունը իրականացվում է «Ա» կատեգորիայի համար նախատեսված ընթացակարգով:

Օրենքի հոդված 16-ի համաձայն նախատեսվող գործունեությունների փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝ նախնական և հիմնական: Նախնական փուլում կազմվում է նախատեսվող գործունեության գնահատման նախնական հայտը, որի փորձաքննության հիման վրա («Ա» կամ «Բ» կատեգորիայի գործունեության դեպքում) կազմվում է տեխնիկական առաջադրանք, ինչը հիմք է ծառայում ՇՄԱԳ հաշվետվության մշակման համար: Նախնական փորձաքննության տևողությունն է 30 աշխատանքային օր: Եթե փորձաքննության ընթացքում որոշվում է, որ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Գ»

կատեգորիայի, ապա ձեռնարկողին նախնական գնահատման հայտի հիման վրա տրվում է փորձաքննության եզրակացություն:

Հոդված 18-ը սահմանում է հիմնադրությային փաստաթղթի ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության և նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությանը ներկայացվող պահանջները: Հոդված 19-ը նկարագրում է փորձաքննության հիմնական փուլը: Սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն փորձաքննության հիմնական փուլի ժամկետները չպետք է գերազանցեն հիմնադրությային փաստաթղթի և նախատեսվող գործունեության «Ա» կատեգորիայի դիպքում մինչև 60 աշխատանքային օր, իսկ նախատեսվող գործունեության «Բ» կատեգորիայի դիպքում մինչև 40 աշխատանքային օր:

Օրենքի հոդված 26-ը սահմանում է ՇՄԱԳ և փորձաքննության ընթացքում հանրային ծանուցմանը և քննարկումների իրականացմանը ներկայացվող պահանջները: Հանրության ծանուցումը իրականացվում է մինչ լույսն են բերված կամ քննարկումները առնվազն 7 աշխատանքային օր առաջ զանգվածային լրատվամիջոցներով, հայտարարություններով և էլեկտրոնային փոստով: Հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվում են 19.11.2014 թ.-ի **ՀՀ կառավարության «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 1325-Ն** որոշմամբ:

**ՀՀ Հողային օրենսգրքը** (2001թ.) սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Համաձայն Օրենսգրքի ՀՀ հողային ֆոնդը դասակարգվում է ըստ հետևյալ կատեգորիաների. 1) գյուղատնտեսական նշանակության, 2) բնակավայրերի, 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 5) հատուկ պահպանվող տարածքների, 6) հատուկ նշանակության, 7) անտառային, 8) ջրային և 9) պահուստային հողերի:

Օրենսգրքի գլուխ 13-ը սահմանում է հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքները, այդ թվում. հողամասն օգտագործման տրամադրելը (անհատույց (մշտական) օգտագործման կամ վարձակալության իրավունքով), հողամասի կառուցապատման իրավունքը, հողամասի նկատմամբ իրավունքների սահմանափակումները և հողամասի սերվիտուտը: Օրենսգրքի գլուխ 15-ը նկարագրում է պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման ընթացակարգը:

**ՀՀ ջրային օրենսգրքի** (2002թ.) հիմնական նպատակն է սահմանել երկրի ջրային ռեսուրսների պաշտպանության իրավական հիմքերը, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով բավարարել քաղաքացիների և տնտեսական ոլորտների ջրային կարիքները և պահպանել ջրային ռեսուրսները ապագա սերունդների համար: Օրենսգրքը կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

**Մթնոլորտային օդի պահպանության մասին** ՀՀ օրենքը (1994թ.) կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների



հարցերը: Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների թույլտվությունների ստացման կարգը և է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները սահմանվում են ՀՀ կառավարության «Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին» №259, «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 1999 թվականի մարտի 30-ի թիվ 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի թիվ 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1673-Ն և «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների - ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին» №160-Ն որոշումներով:

**Թափոնների մասին** ՀՀ օրենքը (2004թ.) սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքի 3-րդ գլուխը նկարագրում է թափոնների նորմավորման, հաշվառման, անձնագրավորման ընթացակարգերը: Օրենքում ներկայացված են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները, ինչպես նաև թափոնների գործածության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի կիրարկումն ապահովվում է մի շարք կառավարության որոշումների և բնապահպանության նախարարի հրամաններով: Մասնավորապես արտադրության և սպառման թափոնների դասակարգումը ըստ վտանգավորության դասի իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006 թ.-ի «ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» թիվ 342-Ն հրամանի համաձայն:

**Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին** ՀՀ օրենքը (2006թ.) կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը դասակարգում է ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքները. ա) ըստ նշանակության (միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների) և բ) ըստ կատեգորիայի (պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի):

**Բուսական աշխարհի մասին** (1999թ.) և **Կենդանական աշխարհի մասին** (2000թ.) ՀՀ օրենքները սահմանում են ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այս օրենքների հիմնականպատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Այն նաև սահմանում է տեսակների՝ մասնավորապես էնդեմիկ և վտանգված, մոնիտորինգի և գնահատման ընթացակարգերը:

**Սեյսմիկ պաշտպանության մասին** ՀՀ օրենքը (2002թ.) սահմանում է սեյսմիկ անվտանգության ապահովման իրավական հիմքերը, նպատակը և սկզբունքները, խնդիրները, միջոցառումները, համակարգը, կազմակերպման հիմնադրույթները և կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև արտակարգ իրավիճակներից բնակչության

և տարածքների պաշտպանության գործունեության ոլորտներում՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ՀՀ քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և օտարերկրյա քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները, օրենսդրության նորմերի և պահանջների կատարման նկատմամբ հսկողության և վերահսկողության մարմինները:

**«ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» թիվ 781-Ն** ՀՀ կառավարության որոշումը սահմանում է ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը: Օբյեկտների և դրանց աճելավայրերի պահպանությունն ապահովում է վայրի բուսատեսակների բազմազանության ամբողջականությունը, բուսական ծածկույթի ջրապահպան, հողապաշտպան, կլիմայակարգավորիչ և ռեկրեացիոն հատկությունների անխաթարությունը:

**«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»** թիվ 71-Ն և **«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»** թիվ 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, ոնորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:

**Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին ու տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին** №108-Ն ՀՀ կառավարության որոշումը սահմանում է բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները:

**Հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի հուլիսի 26-ի հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին** ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի №595-Ն հրամանով սահմանվում են ՀՀ տարածքում հրդեհային անվտանգության կանոնները, որոնք պարտադիր են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների համար:

**«Սեյսմաշրջանացման (սեյսմիկ գոտեորման) և սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզների հաստատման կարգը, սեյսմամիկրոշրջանացման և սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզներին ու դրանց կից ներկայացվող ամփոփագրի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի №1582-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»** №1352-Ն ՀՀ կառավարության որոշում:

**«Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին»** №1616-Ն որոշման մեջ ներկայացված է ՀՀ Երևան քաղաքի պատմամշակութային հուշարձանների ցանկը:

**«Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»** թիվ 967-Ն ՀՀ կառավարության որոշում:


## 5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### 5.1 Նախատեսվող գործունեության նպատակը

Նախատեսվող գործունեության նպատակն է հագեցնել Ձեռնարկության արտադրական հզորությունները պղնձի և ալյումինի հալման վառարաններով, ինչպես նաև հաղորդալարերի և մալուխների պոլիէթիլենային/պոլիվինիլքլորիդային թաղանթապատման հոսքագծերով: Այն թույլ կտա Ձեռնարկությունը կազմակերպել պղնձե և ալյումինե հաղորդալարերի և մալուխների արտադրության ողջ տեխնոլոգիական ցիկլը՝ ձուլման գործընթացից մինչև վերջնական արտադրանքի ստացում:

### 5.2 Արտադրական հրապարակի տեղադիրքը և կառուցվածքը

"ԻՆ-ՎԻ" ՍՊԸ-ի արտադրական հրապարակը գտնվում է Ծենգավիթ վարչական շրջանում՝ Ծիրակի փող. 3-րդ նրբ., 5/1 շենք հասցեում: Ձեռնարկության տեղադիրքը ներկայացված է ստորև **Նկար 5.1**-ում բերված արբանյակային քարտեզում, իսկ կազմակերպչական կառուցվածքը բերված է **Հավելված 9**-ում:



**Նկ. 5.1.** "ԻՆ-ՎԻ" ՍՊԸ արտադրական հրապարակի տեղադիրքի արբանյակային քարտեզը

### 5.3 Ձեռնարկության հողատարածքը

"ԻՆ-ՎԻ" ՍՊԸ-ն գտնվում է Ծենգավիթ վարչական շրջանի արդյունաբերական գոտիներից մեկում: Ձեռնարկությունը տեղակայված է Ծիրակի և Արտաշիսյան փողոցների միջնամասում, որի արդյունքում արտադրական հրապարակի շինությունների մի մասը գտնվում է Ծիրակի փողոց 3-րդ նրբանցք 5/1, 5/2, 5/3, 5/4, իսկ մյուս մասը Արտաշիսյան փողոց 94/8, 94/14, 94/38, 94/39 հասցեներում: Զբաղեցրած հողամասի գլխավոր հատակագիծը բերված է **Հավելված 3**-ում: Հողամասը ունի հետևյալ բնութագիրը՝

- Հողամասի մակերեսը - 7303.5 մ<sup>2</sup>,

- Ասֆալտապատման մակերեսը - 2282 մ<sup>2</sup>,
- Կանաչապատման մակերեսը - 258.3 մ<sup>2</sup>,
- Ծինությունների արտաքին մակերեսը - 6288.8 մ<sup>2</sup>,
- Հողատարածքի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության,
- Հողատարածքի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը - արդյունաբերական օբյեկտների,
- Գրանցման իրավունքի տեսակը - վարձակալության:


Ձեռնարկության կազմում ներառված արտադրամասերը և տեղամասերը ներկայացված են ստորև **Աղյուսակ 5.1**-ում և պատկերված են գլխավոր հատակագծում (տես **Հավելված 3-ը**):

**Աղյուսակ 5.1. Ձեռնարկության արտադրամասերը և տեղամասերը**

Արտադրամասի/տեղամասի համարը	Արտադրամասի/տեղամասի անվանումը
№1	ՊՎԶ արտադրության արտադրամաս
№2 - 1-ին հարկ	Հումքի պահեստ
№2 - 2-րդ հարկ	Ադմինիստրացիա
№3 - 1-ին հարկ	Մուտքի հատված
№3 - 2-րդ հարկ	Գործարանային խանութ
№4	Ընդմիջման բացօթյա հատված
№5	Ավազան
№6 - 1-ին հարկ	Պահեստ
№6 - 2-րդ հարկ	Հանդերձարան
№6 - 3-րդ հարկ	Հանդերձարան
№7	Մալուխի թափոնների վերամշակման տեղամաս
№8	Այլումինի ձգման արտադրամաս
№9	Վերջնական արտադրանքի արտադրության արտադրամաս
№10	Պահեստ
№11 - 1-ին հարկ	Պղնձի ձգման արտադրամաս
№11 - 2-րդ հարկ-1	Պղնձի ձուլման և ձգման արտադրամաս
№11 - 2-րդ հարկ-2	Պղնձի ձգման տեղամաս
№12	Այլումինի ձուլման արտադրամաս
№13	Տրանսֆորմատորների տեղամաս
№14	Կոմպրեսորների տեղամաս
№15	Փայտամշակման տեղամաս
№16	Վերջնական արտադրանքի պահեստ
№17	Փայտի պահեստավորման հատված

Երևան քաղաքի հողօգտագործման շրջանացման քարտեզի համաձայն (տես **Հավելված 4**) Ձեռնարկությունը գտնվում է արդյունաբերության և այլ արտադրությունների համար հատկացված հողատարածքում: Ստորև **Նկար 5.2**-ում ներկայացված է Ձեռնարկության

արբանյակային քարտեզը՝ մոտակա ազդակիր կառույցների տեղադիրքով, իսկ **Հավելված 5**-ում ներկայացված է նախատեսվող գործունեության վայրը իրադրային հատակագիծը: Նախատեսվող գործունեության տարածքի տեղադիրքը և շրջակայքի քարտեզը՝ կոորդինատային տվյալներով պատկերված է **Հավելված 2**-ում:



**Նկ. 5.2.** Ձեռնարկության և մոտակա ազդակիր կառույցների քարտեզը՝ դրանց միջև հեռավորությունների նշագրմամբ

#### 5.4 Ձեռնարկության սանիտարապաշտպանիչ գոտին


ՄՆ<sup>1</sup> 245-71 Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմերի<sup>2</sup> համաձայն, մինչև 1000տ/տարի քանակությամբ գունավոր մետաղների (պղինձ, ցինկ և այլն) երկրորդային վերամշակման արտադրությունների համար նախատեսվում է 300մ Սանիտարապաշտպանիչ Գոտի (ՍՊԳ):

"ԻՆ-ՎԻ" ՍՊԸ-ն արևմուտքից, հարավից և արևելքից շրջապատված է արդյունաբերական ընկերություններով (տես **Նկար 5.2**-ը): Ձեռնարկությունից դեպի հյուսիս-արևմուտք գտնվում է "Մանիթեր" ՍՊԸ-ի բազան, դեպի արևելք՝ 300մ հեռավորության վրա "Ար Գրուպ" ՍՊԸ-ն է, դեպի հարավ-արևելք՝ 200 մ հեռավորության վրա "Շող" ձեթի և յուղի կոմբինատն է: Մոտակա բնակելի տան հեռավորությունը ձեռնարկության սահմանին հաշվարկված է 310մ, իսկ հիմնական մթնոլորտային արտանետումների աղբյուրներից՝ պղնձի և ալյումինի ձուլման վառարանների ծխնելույզներից (N1 և N2) համապատասխանաբար 370մ և 380մ (տես **Նկար 5.3**-ը): Կարելի է եզրակացնել, որ նախատեսվող գործունեության տարածքն

<sup>1</sup><https://files.stroyinf.ru/Data2/1/4294853/4294853876.htm>

<sup>2</sup>Սանիտարական նորմեր

ապահովված է ավելի քան 300մ շառավղով ՍՊԳ-ով, այսինքն ՄՆ 245-71 սանիտարական նորմերի պահանջները պահպանվում են:



ա) Մոտակա բնակելի շենք



բ) Մոտակա բնակելի տուն

**Նկ. 5.3.** Ձեռնարկության մթնոլորտային արտանետումների աղբյուրերի հեռավորությունը մոտակա բնակելի շենքից/տներից

## 5.5 Արտադրական գործընթացի նկարագիրը

### 5.5.1 Արտադրության պլանավորում

Արտադրանքի թողարկման ծրագիրը ձևավորվում է յուրաքանչյուր ամիս՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները՝

- Հաստատված պայմանագրային պարտավորությունները,
- Պահեստում պատրաստի արտադրանքի առկա քանակը,
- Արտադրական գործընթացում գտնվող անավարտ արտադրանքը,
- Համապատասխան ռեսուրսներով արտադրության ապահովվածությունը, տվյալ ամսում դրանք ապահովելու հնարավորությունները:

Այդ տվյալների հիման վրա վաճառքի պատասխանատուն՝ արտադրության տնօրենի և տեխնիկական պատասխանատուի հետ համատեղ, պլանավորում է գալիք ամսվա (որոշ դեպքերում, օպերատիվ վիճակից, հաջորդող օրերից և շաբաթներից կախված) արտադրության ծրագիրը և վերջնական հանձնում արտադրության տնօրենին՝ վերջնական արտադրության ծավալները հաստատելու համար: Պլանային առաջադրանքների կատարման ժամկետները նշանակելու ժամանակ հաշվի են առնվելու հետևյալ հանգամանքները՝

- Հիմնական և օժանդակ նյութերով ապահովելու ժամկետները,
- Արտադրության գործընթացում գտնվող անավարտ արտադրանքը:

Արտադրության ծրագիրը՝ ստորագրված արտադրության տնօրենի կողմից և հաստատված տեխնիկական տնօրենի կողմից, դառնում է օրինական փաստաթուղթ:

Վերոհիշյալ գրանցումը կատարվելու է ամեն հաջորդող ամսվա մեկնարկից մեկ շաբաթ առաջ: Ստանալով առաջադրանքը, արտադրական ստորաբաժանման ղեկավարը հրահանգավորելու է կատարողներին առաջադրանքի ծավալի և կատարման ժամկետների մասին, ինչպես նաև պահեստներից անհրաժեշտ հումքի և օժանդակ նյութերի ստացման համար: Կատարվող աշխատանքի ծավալը որոշվելու է ստորաբաժանման ղեկավարի կողմից:

### 5.5.2 Պղնձե էլեկտրական հաղորդալարերի և մալուխների արտադրության կազմակերպում

Պղինձը հիմնական հաղորդիչ նյութն է, որն օգտագործվում է հաղորդալարերի և մալուխների, հոսանքահաղորդիչ ջղերի պատրաստման համար: Այն արտադրության գործընթացում ենթարկվում է մեխանիկական մշակման (ձգում, գլանում), որը թույլ է տալիս ստանալ տարբեր չափերի կլոր լարեր, ջղեր: Պղնձի ջղերի մակերեսը սկսվելու է 0.12 մմ<sup>2</sup>-ից:

Էլեկտրական հաղորդալարերի և մալուխների արտադրությունը ներառում է բոլոր տիպի արտադրատեսակների և դրանց բաղկացուցիչ տարրերի տեխնոլոգիական գործընթացները: Դրանք են՝

- Մետաղալարի (գլոցուկի) ստացում,
- Կորզանման, ձգման միջոցով մետաղալարից տարբեր տրամագծի հոսանքատար ջղերի արտադրություն,
- Հոսանքատար ջղերի ոլորում (նաև պոլիվինաքլորիդային նյութով/թաղանթով վրադրումից հետո),
- Փաթույթների շիկափափկացում,
- Պոլիվինաքլորիդային նյութի մեկուսացման և պաշտպանիչ թաղանթի վրադրում արտամղմամբ,
- Փորձաքննություն,
- Ըստ չափերի կտրում և փաթեթավորում:

#### *Մետաղալարերի (գլոցուկի) արտադրման տեխնոլոգիա*

Ձեռնարկության արտադրական գործընթացում կիրառվում են պղնձե մետաղալարի (նախապատրաստվածքի) ստացման 2 տարբերակներ՝

1. Պղնձի առաջնային (ձուլասալեր) կամ երկրորդային (թափոններ) հումքի ձուլման արդյունքում արտադրված պղնձի մետաղալար,
2. Այլ մատակարարից ստացված մետաղալար:

Առաջին դեպքում մետաղալարը (նախապատրաստվածքը) արտադրվելու է Ձեռնարկությունում՝ ձուլման եղանակով: Երկրորդային հումքից ստացվում է ամբողջ արտադրանքի մոտ 20%-ը: Ձուլման վառարանից կորզանման եղանակով ձուլագանգվածը անընդհատ մտնելու է գլոցման հաստոց, որից դուրս է գալու մետաղալարի պատրաստի արտադրանքը:

Պղնձե մետաղալարի պատրաստման հոսքային գծի մեջ մտնելու են հետևյալ հիմնական հանգուցամասերը՝ հալման վառարան, ձուլման մեքենա, անընդհատ գլոցման հաստոց:

***Կորզան, ձգման միջոցով մետաղալարից տարբեր տրամագծի հոսանքատար ջղերի արտադրության տեխնոլոգիական գործընթաց***

Պղնձի մետաղալարից կորզանման մեթոդով ստացվելու են տարբեր տրամագծի կլոր ջղեր (0.12-0.5մմ<sup>2</sup>): Մետաղալարը միջաձգվում է անցքի միջով, որի լայնական չափերը ավելի փոքր են, քան միջաձգվող մետաղի սկզբնական լայնական կտրվածքը:

***Հոսանքատար ջղերի ոլորում:*** Ջղերից ոլորման միջոցով ստացվում են չմեկուսացված հաղորդալարեր, փաթույթներ: Այն իրականացվում է վանդակային և շրջանակային մեքենաների միջոցով: Մեկուսացված ջղերից անմիջապես ոլորվում են հաղորդալարերը կամ դրանց կառուցվածքում ներառված տարբեր բաղադրանքի մասերը՝ խմբեր ու փնջեր:

***Փայտյալարի շիկափափկացում:*** Մետաղալարի կորզանման ժամանակ փոխվում են ձգված մետաղի հատկությունները՝ ամրությունը մեծանում է, իսկ պլաստիկությունը և էլեկտրահաղորդականությունը փոքրանում: Կորզանված մետաղալարի պլաստիկությունը և էլեկտրահաղորդականությունը վերականգնելու և մեծացնելու նպատակով վառարաններում կատարվելու է դրա շիկափափկացում՝ մինչև որոշակի ջերմաստիճանում դրանք տաքացնելով: Այն կատարվում է 200-400°C ջերմաստիճանային տիրույթում: Պղնձալարը օքսիդացումից պահպանելու համար շիկափափկացումը կատարվելու է պաշտպանիչ մթնոլորտում կամ վակուում միջավայրում: Այլ գործընթացում որպես պաշտպանիչ մթնոլորտ օգտագործվում է ածխաթթու գազ: Վառարաններում և սարքերում, որպես ջերմության աղբյուր ծառայելու է էլեկտրական էներգիան:

**5.5.3 Պոլիմիաբլորիդային նյութից մեկուսիչ/պաշտպանիչ թաղանթների վրադրումը (Էքստրուզիոն գործընթաց)**

Էքստրուզիան տեխնոլոգիական գործընթաց է, որի ընթացքում կլոր կամ այլ կտրվածքով կաղապարման անցքով նյութը ենթարկվում է արտամղման: Արտադրությունում պոլիմերային նյութերը արտամղման են ենթարկվելու օդակային անցքով որպես խողովակ, որը շրջագրվում է հոսանքատար ջիղը կամ մալուխային նախապատրաստվածքը: Պոլիմերները մալուխների և հաղորդալարերի արտադրությունում արտամղման են ենթարկվում հավված վիճակում:

Հոսքագծի հիմնական տեխնոլոգիական հանգույցը էքստրուզերն է, որով կատարվում է մեկուսիչ կամ փողրակային ծածկույթների վրադրումը, որից հետո այդ ծածկույթները հովացվում են՝ անցնելով ջրի վաննաներով:



Որոշ մալուխների արտադրման գործընթացներում մեկուսացման համար օգտագործվելու են թելեր, իսկ որոշներում թելերի փաթեթումը հոսանքահաղորդիչ մետաղական լարերի վրա: Փաթեթման գործընթացում օգտագործվում են բամբակե, մետաքսե և սինթետիկ թելեր:

**Փորձաքննություն:** Պատրաստի հաղորդալարերը վերահսկողության պատասխանատուի կողմից ենթարկվում են լաբորատոր փորձաքննության: Պատրաստի արտադրանքի այն փորձարկումները, որոնք հնարավոր չէ կատարել Ձեռնարկության կողմից, իրականացվում են կապալառու կազմակերպությունները: Պատրաստի արտադրանքը տեղափոխվում է վերջնական կտրման և փաթեթավորման միայն փորձաքննության իրականացումից հետո:

**Կտրում և փաթեթավորում:** Փորձաքննություն անցած և ընդունված հաղորդալարը տեղափոխվում է կտրման և փաթեթավորման ենթամաս: Նախ ըստ հստակեցված չափերի հաղորդալարերը կտրվում են, այնուհետև այն փաթեթավորվում է պոլիէթիլենով՝ վրան փակցնելով հաղորդալարի վերաբերյալ համապատասխան տվյալներ (պիտակավորում):

#### 5.5.4 Այլումինե հաղորդալարերի և մալուխների արտադրության գործընթացի կազմակերպում

Հոսանքատար ջղերի միևնույն չափերում այլումինային ջղի զանգվածն ավելի քան 3 անգամ փոքր է պղնձե ջղի զանգվածից: Պղնձի հետ համեմատած՝ այլումինային մետաղալարերի անկայունությունը բազմաթիվ ոլորումների նկատմամբ սահմանափակում է դրանց օգտագործումը անշարժ (ֆիքսված) տեղակայման պայմաններում:

Այլումինե հաղորդալարերի արտադրությունը ներառում է հետևյալ տեխնոլոգիական գործընթացները՝

- Ձուլում և գլանների ստացում,
- Գլաններից էքստրուզիոն եղանակով մետաղալարի (8 մմ<sup>2</sup>) արտադրում,
- Կորզանման, ձգման միջոցով մետաղալարից տարբեր տրամագծի հոսանքատար ջղերի (1.70 մմ<sup>2</sup>) արտադրություն,
- Հոսանքատար ջղերի ոլորում (նաև պոլիվինաքլորիդային նյութով/թաղանթով վրադրումից հետո),
- Փաթույթների շիկափափկացում,
- Պոլիվինաքլորիդային նյութի մեկուսացման և պաշտպանիչ թաղանթի վրադրում արտամղմամբ,
- Փորձաքննություն,
- Ըստ չափերի կտրում և փաթեթավորում:

**Ձուլում և գլանների ստացում:** Ձուլման համար հումք են հանդիսանում տեղական շուկայում առկա այլումինի թափոնները, որոնցից ստացվում է ամբողջ արտադրանքի մոտ 80%-ը: Մնացած 20%-ը առաջնային այլումին է ձուլասպերի տեսքով: Վառարաններում հալեցված այլումինը լցվում է կաղապարների մեջ՝ հատուկ գլանակների ստացման համար, այնուհետև սառացվում և պահեստավորվում:

**Կորզանման, ձգման միջոցով մետաղալարից տարբեր տրամագծի հոսանքատար ջղերի արտադրության տեխնոլոգիական գործընթաց:** Այլումինի գլանակը նախ վառարանում տաքացվում է 570°C-ի պայմաններում, այնուհետև մղվում դեպի հաստոց: Էքստրուզիոն եղանակով և ճնշման արդյունքում ստացվում է 8մմ<sup>2</sup> տրամագծով մետաղալար:

Այլումինե մետաղալարից կորզանման մեթոդով ստանում են տարբեր տրամագծի կլոր ջղեր (1.70-6.7մմ<sup>2</sup>): Մետաղալարը միջաձգվում է անցքի միջով, որի լայնական չափերը ավելի փոքր են, քան միջաձգվող մետաղի սկզբնական լայնական կտրվածքը:

**Հոսանքատար ջղերի ոլորում:** Ջղերից ոլորման միջոցով ստացվում են չմեկուսացված հաղորդալարեր, փաթույթներ: Այն իրականացվում է վանդակային և շրջանակային մեքենաների միջոցով: Մեկուսացված ջղերից անմիջապես ոլորվում են հաղորդալարեր կամ դրանց կառուցվածքում ներառված տարբեր բաղկացուցիչ մասեր՝ խմբեր ու փնջեր:

**Փաթույթների շիկափափկացում:** Կորզանման ժամանակ փոխվում են ձգված այլումինի հատկությունները: Փափկացման գործընթացը տեղի է ունենում վառարաններում՝ 150-300°C-ի պայմաններում: Վառարանում՝ որպես ջերմության աղբյուր, ծառայելու է էլեկտրական էներգիան:

Պոլիվինալորիդային նյութից մեկուսացման և պաշտպանիչ թաղանթների վրադրումը (էքստրուզիոն գործընթաց): Արտադրությունում պոլիմերային նյութերը արտամղման են ենթարկվելու օղակային անցքով որպես խողովակ, որը շրջագրվելու է այլումինե հաղորդալարը կամ մալուխը: Պոլիմերները հաղորդալարերի արտադրությունում արտամղման են ենթարկվելու հաված վիճակում:

Հոսքագծի հիմնական տեխնոլոգիական հանգույցը էքստրուդերն է, որով կատարվելու է մեկուսիչ կամ փողրակային ծածկույթների վրադրումը, որից հետո այդ ծածկույթները հովացվելու են՝ անցնելով ջրի վաննաներով:

**Փորձաքննություն:** Պատրաստի հաղորդալարերը վերահսկողության պատասխանատուի կողմից ենթարկվում են լաբորատոր փորձաքննության: Պատրաստի արտադրանքի այն փորձարկումները, որոնք հնարավոր չէ կատարել Ձեռնարկությունում, իրականացվում են կապալառու կազմակերպության կողմից: Պատրաստի արտադրանքը տեղափոխվում է վերջնական կտրման և փաթեթավորման միայն փորձաքննությունը լրիվ ծավալով իրականացնելուց հետո:

**Կտրում և փաթեթավորում:** Փորձաքննություն անցած և ընդունված հաղորդալարը տեղափոխվում է կտրման ու փաթեթավորման տեղամաս: Նախ կատարվում է ըստ հաստատված չափերի կտրում, այնուհետև հաղորդալարը փաթեթավորվում է պոլիէթիլենով վերջինիս վրա փակցնելով հաղորդալարի վերաբերյալ համապատասխան տվյալներ (պիտակավորում):

### 5.5.5 Պոլիվինալորիդային առաջնային հումքի արտադրության կազմակերպում

Պոլիվինալորիդային հումքից առաջնային նյութի արտադրության գործընթացը տեղի է ունենում հետևյալ հաջորդականությամբ.

- Հումքի բաղադրիչների խառնում և միատար նյութի ստացում,
- Խառնուրդի հովացում,
- Արտամղում էքստրուզիա:

**Բաղադրիչների խառնում և միատար նյութի ստացում:** Ելանյութերը (տես **Աղյուսակ 5.3**) խառնվում են համապատասխան համամասնությամբ 150°C-ի պայմաններում: Խառնուրդի ստեղծումը պոլիմերի համակցումն է, ինչպես նաև մնացած անհրաժեշտ հավելումների

ներմուծումը և դրանց մանրակրկիտ խառնումն է որոշակի ժամանակում ու ջերմաստիճանի պայմաններում՝ համասեռ նյութի ստացման համար:

**Խառնուրդի հովացում:** Դրանից հետո խառնուրդը հովացվում է մինչև 150°C, լիցքաթափվում: Հովացումը անհրաժեշտ է, որպեսի գանգվածը հեղուկից վերածվի ազատ հոսքի և չխցանի այն ուղիները, որոնցով անցնելու է էքստրուդերով:

**Էքստրուդերային** տարողության մեջ խառնուրդը կրկին հավելու (150°C-ի պայմաններում) և արտամղվելու է որոշակի կոնֆիգուրացիայի անցքերով (սովորաբար կլոր) սալիկի միջոցով: Գնդիկների որակը մեծապես կախված է լինելու հալման բալոնի ճիշտ աշխատանքից (հալման ջերմաստիճան) և պտուտակի երկայնքով հալման արագությունից:

Պոլիվինիլորիդային առաջնային նյութի արտադրության համար օգտագործվող սարքավորման տվյալները բերված են **Աղյուսակ 5.6**-ում, իսկ դրա արտաքին տեսքը **Հավելված 6**-ում:

### 5.5.6 Ձեռնարկության կառավարման համակարգը

Ձեռնարկությունում գործող որակի կառավարման համակարգի 2022թ.-ին միջազգային սերտիֆիկացվող մարմնի կողմից ճանաչվել է որպես ISO 9001:2015 ստանդարտի պահանջներին համապատասխանող (համապատասխան սերտիֆիկատը բերված է **Հավելված 7**), ինչը վկայում է, որ արտադրական գործընթացները շարունակաբար բարելավում են և միտված են մշակված տեխնոլոգիայի տեխնիկական հարաչափերի խստիվ պահպանմանը, որն անուղղակիորեն նպաստում է նաև օգտագործվող հումքի և էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, խոտանի բացառմանը, մթնոլորտային արտանետումների նվազեցմանը և այլն: «ԻՆՎԻ» ՍՊԸ-ն պլանավորում է նաև ձեռնարկությունում ներդրնել ISO 14001:2015 "Էկոլոգիական կառավարման համակարգ" միջազգային ստանդարտի պահանջները, ինչը ամբողջությամբ կառավարելի կդարձնի վերջինիս բնապահպանական գործունեությունը:

Ձեռնարկությունը 2016թ.-ին ստացել է նաև Եվրասիական Տնտեսական Միության համապատասխանության սերտիֆիկատ (**Հավելված 8**):

## 5.6 Տեխնիկատնտեսական ցուցանիշներ

### 5.6.1 Արտադրության թողարկումը

Ձեռնարկության պղնձե և ալյումինե մալուխների և հաղորդալարերի, ինչպես նաև ՊՎԸ-ի պլանավորված տարեկան արտադրանքը բերված է **Աղյուսակ 5.2**-ում:

**Աղյուսակ 5.2. Ձեռնարկության պղնձե և ալյումինե մալուխների և հաղորդալարերի պլանավորված տարեկան արտադրանքը**

№	Անվանումը	Չափման միավորը	Քանակը
1	Ալյումինե հաղորդալար և մալուխ <sup>3</sup>	կգ	343018
2	Պղնձե հաղորդալար և մալուխ <sup>3</sup>	կգ	552590
<b>Ընդամենը<sup>4</sup></b>		<b>կգ</b>	<b>895608</b>

<sup>3</sup> ՊՎԸ և պոլիէթիլենային մեկուսացմամբ

<sup>4</sup> Առանց տեխնոլոգիական կորուստների, որոնք պղնձի և ալյումինի համար կազմում են 0.4%

5.6.2

5.6.2 Օգտագործող հումք և այլ օժանդակ նյութեր

Պղնձե և ալյումինե մալուխների և հաղորդալարերի, ինչպես նաև ՊՎՔ-ի արտադրության գործընթացում կիրառվող նյութերը ներկայացված են **Աղյուսակ 5.3**-ում:

**Աղյուսակ 5.3.** Ջեռնարկության պղնձե և ալյումինե մալուխների և հաղորդալարերի, ինչպես նաև ՊՎՔ արտադրության գործընթացում կիրառվող նյութերը

№	Անվանումը	Չափման միավորը	Քանակը
1	Ալյումին	կգ	292578.9
2	Պղինձ	կգ	526700.4
3	Պոլիէթիլենային հումք առաջնային	կգ	10539
4	Կատալիզատոր պոլիէթիլենային հումքի մշակման համար	կգ	14
5	ՊՎՔ հումք առաջնային	կգ	69052.8
6	Տեխնոլոգիական կորուստներ (~0.4%)	կգ	-3277.1
<b>Ընդամենը</b>		կգ	<b>895608</b>
6	Օժանդակ նյութեր՝ մետաղալար (պողպատյա լար)	կգ	15205.5
<b>Ընդամենը</b>		կգ	<b>910813.5</b>
		տոննա	<b>910.814</b>
<b>ՊՎՔ-ի արտադրության նյութեր</b>			
1	Կալցիումի կարբոնատ փոշու տեսքով ANDCARB CT-2X	կգ	21676.7
2	Օրգանական քիմիական մածուծիկ հեղուկ ՊՎՔ արտադրության համար ESBO	կգ	669.1
3	Կայունարար ՊՎՔ արտադրության համար	կգ	1177.6
4	Ներկանյութ տիտանի դիօքսիդի հիմքով 80% և ավելի տիտանի զանգվածով AQ7676	կգ	397.9
5	Պոլիէթիլենային ոսկ մալուխների արտադրության համար AQ422	կգ	55.7
6	Ստեարինաթթու	կգ	264.6
7	Ուլտրամարինի պաստրատուկ	կգ	1.4
8	Դիօկտիլտերեֆտարատ /DOTP/ մալուխների մեկուսիչների արտադրության համար	կգ	18604.8
9	ՊՎՔ C-7059-M	կգ	26205
<b>Ընդամենը</b>		<b>կգ</b>	<b>69052.8</b>
		<b>տ</b>	<b>69.053</b>

5.6.3 Էլեկտրաէներգիայի և բնառեսուրսների սպառում

Էլեկտրաէներգիա

Ընկերության էլեկտրամատակարարումը իրականացվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից (պայմանագրի քարտի համար - 3391409): Ջեռնարկության արտադրամասերի և տեղամասերի, ինչպես նաև վարչական շինությունների էլեկտրասնուցումը

իրականացվում է ներքին էլեկտրամատակարարման ցանցի միջոցով: Ձեռնարկության տարեկան էներգասպառումը միջինում կկազմի 2.3 մլն. կՎտ/ժամ:

2022թ.-ին Ձեռնարկությունը նախատեսում է իր շինությունների տանիքներին տեղադրել 545.4 կՎտ հզորությամբ արևային էներգիայի ֆոտովոլտային կայան/վահանակներ, որի նպատակով 05.04.2022թ.-ին պայմանագիր է կնքվել ոլորտում մասնագիտացված «ԷկոՎիլ» ՍՊԸ-ի հետ: Արևային ֆոտովոլտային կայանի օգտակար գործողության գործակցի ընդհանուր հավանական կորուստը 20 տարիների ընթացքում կազմելու է ոչ ավել քան 17-18%:

### **Գազամատակարարում**

Ձեռնարկության գազամատակարարումը իրականացվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից: Միջին տարեկան ծախսը կկազմի մոտ 150,000 մ<sup>3</sup>:

### **Ջրամատակարարում**

Ձեռնարկությունում արտադրական և խմելու տնտեսական նպատակների համար անհրաժեշտ ջրի մատակարարումը իրականացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից՝ պայմանագրային հիմունքներով (**Հավելված 11**):

Արտադրության մեջ ջուրը հիմնականում օգտագործվում է տեխնոլոգիական սարքավորումների առանձին հանգույցների հովացման համար: Ձեռնարկության արտադրական կարիքների համար օգտագործվում է շրջանառու ջուր փակ ցիկլով/համակարգով: Տեխնոլոգիական գործընթացում օգտագործվող ջուրը ուղղվում է արտադրական ջրի ավազան, որտեղ սառեցվելուց հետո նորից ուղղվում է դեպի արտադրություն: Գոլորշիացման և այլ կորուստները կոմպենսացնելու նպատակով շրջանառու ջրի փակ համակարգը պարբերաբար լրասնվում է խմելու որակի ջրով:

Ընկերության միջին տարեկան ջրապահանջը, հաշվի առնելով նաև նախատեսվող գործունեության իրականացումը, կկազմի մոտ 2500 մ<sup>3</sup>:

Արտադրական ջրավազանն իրենից ներկայացնում է 30 մ<sup>3</sup> տարողությամբ երկաթբետոնե մետաղական ծածկով ավազան (**Նկար 5.4**): Շրջանառու ջուրը՝ արտադրական ավազանից ջրամատակարարման ներքին ցանցի և պոմպի միջոցով, մղվում է դեպի տեխնոլոգիական սարքավորումների հովացման համակարգեր, ապա վերադարձվում ավազան:

### **Ջրահեռացում**

Ձեռնարկությունում առաջացած կոմունալ կենցաղային կեղտաջրերը՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի համաձայն, քաղաքային կոյուղու համակարգով ուղղվում է դեպի վերջինիս մաքրման կայան:



**Նկ. 5.4.** Արտադրական ջրի ավազանը

## 5.7 Արտադրական գործընթացի սարքավորումները և անձնակազմը

Տեխնիկական պարկի ընդլայնման արդյունքում Ընկերությունում տեղադրվելու են այլումինի և պղնձի ձուլման վառարաններ, այդ թվում այլումինի ձուլման համար երկու գազային (**Աղյուսակ 5.4**) և պղնձի ձուլման համար մեկ էլեկտրական (**Աղյուսակ 5.5**): ՊՎՔ առաջնային նյութի արտադրության համար օգտագործվող սարքավորման տեխնիկական բնութագիրը բերված է **Աղյուսակ 5.6**-ում:

**Աղյուսակ 5.4.** Ձեռնարկությունում տեղադրվող այլումինի ձուլման գազային վառարանների բնութագրերը

№	Սարքավորման անվանումը	Արտադրման տարեթիվը	Մակնիշը	Գործարանային №	Տարողունակությունը, կգ	Առավելագույն ջերմաստիճանը, °C	Հզորությունը, կգ/կալ
1	Այլումինի ձուլման գազային վառարան	2019	Ikiteli OSB Tadok Sansit	BMG 17586	500	1670	400000
2	Այլումինի ձուլման գազային վառարան	2016	Ikiteli OSB Tadok Sansit	BMG 17001	500	1670	400000

**Աղյուսակ 5.5.** Ձեռնարկությունում տեղադրվող պղնձի ձուլման էլեկտրական ինդուկցիոն վառարանի բնութագիրը

№	Սարքավորման անվանումը	Արտադրման տարեթիվը	Մակնիշը	Տարողունակությունը, տ	Հզորությունը, կՎժ/տ
1	Պղնձի ձուլման էլեկտրական ինդուկցիոն վառարան	2013	OPS	3000	315-350

**Աղյուսակ 5.6.** ՊՎՔ առաջնային նյութի արտադրության համար օգտագործվող սարքավորման տեխնիկական բնութագիրը

№	Սարքավորման անվանումը	Արտադրման տարեթիվը	Մակնիշը	Առավելագույն արագությունը, պ/ր	Տարողունակությունը, կգ/ժ	Էլ. ծախսը, կՎժ
1	ՊՎՔ արտադրող էքստրուդեր	2017	TAKIMSAN PLATEX 155 8	50	500-900	45-55

Ներկայումս Ընկերությունը ունի 71 աշխատակից, որից՝

- Վարչական անձնակազմ - 8 աշխատակից,
- Սպասարկող անձնակազմ - 6 աշխատակից,
- Մարքեթինգային բաժնի անձնակազմ - 6 աշխատակից,
- Ինժեներական բաժնի անձնակազմ - 6 աշխատակից,
- Արտադրության բաժնի անձնակազմ - 45 աշխատակից:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում աշխատողների քանակը կավելանա 20-30%-ով:

Ստորև **Աղյուսակ 5.7**-ում ներկայացված են Ձեռնարկությունում օգտագործվող այլ սարքավորումները և տեխնիկան:


**Աղյուսակ 5.7. Ձեռնարկությունում օգտագործվող այլ սարքավորումները և տեխնիկան**

№	Սարքավորման անվանումը	Սարքավորումների տվյալները		
		Արտադրման տարեթիվը	Մակնիշը	Գործարանային №
1	Ավտոբեռնիչ եղանավոր դիզ-շարժիչով 2.5 տոննա	1987	HELI CPCD 25 2020	-
2	Ավտոմեքենա	2004	MERCEDES-BENZ SPRINTER 31 3CDI 2.2D 2004	
3	Կոշտ ձգող հաստոց ՎՄ-13	1978	BEM	BEM-333
4	Ձգման հաստոց միջին	2008	DIGEP	B19-005
5	Պղնձալար ձգող, տրամագիծ փոքրացնող սարք	2017	DADONG B18-2	B18-00018
6	Ձգման հաստոց միջին-գերմանական	1989	DIREP	B19-004
7	Սարքավորում մալուխը մեկուսիչից առանձնացնող	2018	MELIKSAH	018101
8	Ոլորող մեքենա	1980	DSO-63	-
9	Մետաղալար գործող սարք	2013	DONGGUAN SHS-800	-
10	Պղնձալարը երկտակ ոլորող-պտտող սարքավորում	2020	INHMAC 63H	0189756
11	Պղնձի ոլորման հաստոց	1978	DIGEP	27-341-70
12	Ձգման հաստոց	1981	BEM	-
13	ՊՎՔ արտադրող էքստրուդեր	2017	TAKIMSAN PLATEX 155 8	XEB-1
14	Ոլորման հաստոց	2013	Xin ming	1560
15	Շիկափափկեցման վառարան 1	2018	RJ60-6	Sun60-7
16	Շիկափափկեցման վառարան 2	2018	RJ75-6	Sun75-7
17	ՊՎՔ նստեցման հոսքային գիծ	1990	-	9010-512-18
18	ՊՎՔ նստեցման հոսքային գիծ	1978	Gotha	963/335
19	Ոլորման հաստոց	2017	IMHmac 400	-

№	Սարքավորման անվանումը	Սարքավորումների տվյալները		
		Արտադրման տարեթիվը	Մակնիշը	Գործարանային №
20	ՊՎՔ նստեցման հոսքային գիծ	2015	IMC mac 75+25	19020615
21	ՊՎՔ նստեցման հոսքային գիծ	2014	Gemwell 65+35	1805
22	Կտրման սարք	1982	POLAND	1722
23	Փաթեթավորման սարք	-	-	-
24	Սրող սարք	1978	ЗК633	26749
25	Խառատահաս տոց	1980	Красный пролетариат Сделано в СССР	27138
26	Ֆրեզերային հաստոց	1976	Сделано в СССР	6388
27	Հորատման հաստոց	1970	Сделано в СС	27569
28	Ցածր լարման վահանակ 1	2010	ООО Электробрибор	2546811
29	Ցածր լարման վահանակ 2	2010	ООО Электробрибор	2546812
30	Ցածր լարման վահանակ 3	2010	ООО Электробрибор	2546813
31	Գեներատոր դիզելային GUCBIR GJR125	2013	GUGBR 125ԿՎ	09132971
32	Կոմպրեսոր 100լ SOMAFIX SFHK 100 1	2019	ECOMAK	RB2122
33	Օդի բարձր ճնշման բալոն 2000 մ <sup>3</sup>	1979	GHEMAR	761812874
34	Օդի բարձր ճնշման բալոն 500 մ <sup>3</sup>	1979	GHEMAR	76020465

Ձուլման տեղամասերը, որոնցում տեղադրվում են այլունիների և պղնձի ձուլման վառարանները, հագեցած են ծխատարերով (**Նկար 5.5**), որոնց միջոցով տեղամասերում ձուլման գործընթացից առաջացած գազերը հեռացվելու են մթնոլորտ: Ծխատարերի միջին հեռավորությունը վառարաններից կազմում է մոտ 10-12 մ: Ձուլման վառարանների տեխնիկական անձնագրերը բերված են սույն Հայտի **Հավելված 10**-ում:





Նկ. 5.5. Ջուլման տեղամասերի ծխատարերի տեղադիրքերը

## 5.8 Նախատեսվող գործունեության ժամանակացույցը

Նախատեսվող գործունեությունը նախատեսվում է իրագործել 6 ամիսների ընթացքում: Այն ներառում է հետևյալ փուլերը՝

1. Պղնձի և ալյումինի ձուլման վառարանների և ՊՎՔ արտադրման ու նստեցման հոսքագծերի ընտրություն և ձեռք բերում,
2. Ձեռք բերված սարքավորումների տեղադրում և կարգաբերում,
3. Շահագործում և տեխնոլոգիական ցիկլի մեջ ներառում:

## 5.9 Մթնոլորտային արտանետումները

Համաձայն [5] մեթոդակարգի, նախատեսվող գործունեության իրագործման արդյունքում կառաջանան հետևյալ վնասակար նյութերի արտանետումները.

- 1) Պղնձի և ալյումինի ձուլման վառարաններից՝
  - Կախված նյութեր (փոշի, PM2.5, PM10),
  - Ազոտի օքսիդներ,
  - Ածխածնի օքսիդ,
  - Ծմբային անհիդրիդ:

<sup>5</sup>Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986

2) ՊՎՔ արտադրման և նստեցման հոսքագծերից՝

- ջրածնի քլորիդ,
- ածխածնի օքսիդ,
- պոլիվինիլքլորիդի աերոզոլ/գոլորշի:

Նշված սարքավորումները դիտարկվում են որպես մթնոլորտային արտանետումների աղբյուրներ, որոնցից յուրաքանչյուր վնասակար նյութի արտանետման հաշվարկը կկատարվի ՇՄԱԳ հիմնական փուլում, իսկ արդյունքները կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվության մեջ:

### 5.10 Առաջացող թափոնները

Ձեռնարկության արտադրական գործունեության ընթացքում առաջանում են վտանգավորության 1-ից 5-րդ դասերի թափոններ: Նշված թափոնները, իրենց ծածկագրերով և վտանգավորության դասերով ամփոփված են ստորև **Աղյուսակ 5.8**-ում: Առաջացող թափոնների քանակությունների հաշվարկը, ինչպես նաև դրանց հետ գործածության եղանակները կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվության մեջ:

**Աղյուսակ 5.8. Ձեռնարկությունում գոյացող թափոնները, դրանց ծածկագրերը և վտանգավորության դասերը**

№	Թափոնի անվանումը ըստ Դասակարգչի <sup>6</sup>	Վտանգ. դասը	Ծածկագիրը
1	Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան	II	92110100 13 01 2
2	Բանեցված շարժիչների յուղերի թափոններ	III	54100201 02 03 3
3	Բանեցված կոմպրեսորային յուղեր	III	54100211 02 03 3
4	Հալոգեններ չպարունակող բանեցված հիդրավլիկ յուղեր	III	54100213 02 03 3
5	Իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդներ	III	54100302 02 03 3
6	Օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար	III	35310305 01 01 3
7	Այլումինե խարամ	IV	31202900 01 01 4
8	Յուղոտված լաթեր	IV	58200600 01 01 4
9	Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (այդ թվում՝ թուջի և/կամ պողպատի փոշի)	IV	35131100 01 00 4
10	Եռակցման խարամ	IV	31404800 01 99 4
11	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	91200400 01 00 4
12	Օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված այլումինե հաղորդալար	V	35310105 01 99 5

<sup>6</sup>ՀՀ բնապահպանության նախարարի «ՀՀ տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» №342-Ն հրաման (<https://www.arlis.am/documentview.aspx?docid=163726>)

5.11

**5.11 Արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը**

Ընկերությունում ներդրված է "Գործողությունները վթարային վիճակի և դրա հետևանքների վերացման պայմաններում" հրահանգը: Այն սահմանում է վթարների բացառմանը և/կամ դրանց բացասական հետևանքների մեղմացմանն/արձագանքմանն ուղղված գործողությունների հերթականությունը և կարգը:

**5.12 Կանաչապատում**

Ձեռնարկության արտադրական հրապարակի տարածքում առկա 258.3մ<sup>2</sup> մակերեսով կանաչապատ տարածք, որտեղ Ընկերությունը նախկինում իրականացրել է ծառատունկ, հիմնականում ծիրանենի, բալենի, սալորենի, սերկևիլ, խաղող և դեկորատիվ ծառեր: 2023 թվականին պլանավորված է տնկել ևս 74 հատ ծառ: Վերջիններիս քանակությունները ներկայացված են ստորև **Աղյուսակ 5.9**-ում:

**Աղյուսակ 5.9. Ձեռնարկության տարածքում առկա և տնկման ենթակա ծառերի տեսակները և քանակները**

Ծառեր	Չբաղեցնող մակերես	Առկա քանակը	Պլանավորվում է տնկել 2023թ.-ին
Ծիրանենի	230 մ <sup>2</sup>	8	12
Բալենի		4	10
Սերկևիլ		2	10
Սալորենի		8	8
Այլ		5	2
Խաղող		20	12
Ծիրանենի	10 մ <sup>2</sup>	6	7
Դեկորատիվ	12 մ <sup>2</sup>	2	8
Բալենի	6 մ <sup>2</sup>	3	5
<b>Ընդամենը</b>	<b>258 մ<sup>2</sup></b>	<b>58</b>	<b>74</b>

**5.13 Օդի պահպանություն**

Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում Ձեռնարկությունը դիտարկում է նախաձեռնել հետևյալ միջոցառումները՝

- Ձուլման տեղամասում օդափոխման համակարգի վրա կտեղադրվեն փոշու գտման/մաքրման համար տեղակայանքներ,
- Ձեռնարկության տարածքում և տարածքից դուրս՝ հնարավոր ազդեցության և մոտակա բնակելի գոտիներում օդի որակի մշտադիտարկում,
- Ձեռնարկության տարածքում՝ կանաչապատման աշխատանքների շարունակական իրականացում:

## 6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

### 6.1 Գիտարկվող տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը, լանդշաֆտը և ռելիեֆը

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան գոգավորության հյուսիսարևելյան մասում 860-1400 մ հիպսոմետրիկ նիշերի վրա: Հյուսիս-արևմուտքից այն շրջափակված է Եղվարդի սարահարթով, հյուսիսից և հյուսիս-արևելքից՝ Հրազդանի հովիտով և Կոտայքի սարահարթով, հարավից և հարավ-արևմուտքից՝ Արարատյան գոգավորության նախալեռնային հարթավայրերով: Չբաղեցնում է շուրջ 300 կմ<sup>2</sup> տարածք: Երևան քաղաքում և նրա հարակից տարածքներում առանձնացվում են հետևյալ հիմնական լեռնագրական ձևերը՝

- Հրազդանի գետահովիտը,
- Եղվարդի սարահարթը,
- Կոտայքի սարահարթը,
- Չորրորդական ժամանակաշրջանի կառուցվածքային դենուդացիոն ռելիեֆը,
- Արարատյան դաշտը:

Հրազդան գետը Երևան քաղաքը բաժանում է երկու հիմնական լեռնագրական ձևերի՝ Եղվարդի և Կոտայքի սարահարթերի: Հրազդանի գետահովտի լանջերը զառիթափ են, կազմված են բազալտային և անդեզիտա-բազալտային լավաներից:

Երևանի տարածքը բաժանված է 4 ուղղաձիգ լանդշաֆտային գոտիներից կամ լանդշաֆտային տիպերից՝

- Չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով,
- Կիսաանապատային՝ անապատների տարրերով,
- Անապատային՝ կիսաանապատային տարրերով,
- Ցածրադիր մարգագետնային:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորվել է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

### 6.2 Տարածաշրջանի երկրաբանությունը

Երկրաբանական տեսանկյունից Երևան քաղաքի տարածքում ամենահին երկրաբանական միավորը Ստորին-Միջին Օլիգոցեն ժամանակաշրջանի Ծորաղբյուրի շերտախումբն է, իսկ ամենաերիտասարդը Հոլոցեն ժամանակաշրջանի (վերջին ժամանակաշրջանը) ողողահունի նստվածքներն են:

Երևանի տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային և հրաբխանստվածքային ֆացիաներով: Ժայռային գրունտները՝ դոլերիտային բազալտները, անդեզիտա-բազալտները և տեղ-տեղ դրանց վրա տեղադրված կիսաժայռային նստվածքները՝ տուֆերը, առանձնանում են մեծ ամրությամբ: Փոխյր գրունտները հիմնականում հանդիսանում են ժամանակակից լանջային նստվածքները:

Ուրբանիզացիան զգալի ազդեցություն է թողել Երևանի երկրաբանական միջավայրի վրա: Երևանում կառուցվող բազմահարկ համալիրներն իրենց ստորգետնյա հարկերով, ստեղծում են հավելյալ լարվածություն գրունտային պայմանների վրա: Կառուցապատումներ են իրականացվում նաև քաղաքի լանջերին, որի հետևանքով արհեստականորեն մեծանում է շինությունների սեյսմիկ վտանգը: Արդյունքում, Երևան քաղաքում կառուցապատման հետևանքով տեղի են ունեցել գրունտների զգալի տեղափոխումներ, փոխվել են տեղամասերի ֆիզիկա-երկրաբանական պայմանները:


### 6.3 Տարածաշրջանի հիդրոերկրաբանությունը

Երևանի տարածաշրջանի հիմնական ջրային երակը Հրազդան գետն է՝ Արաքսի ձախ վտակը: Հրազդանը սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք: Երկարությունը 141 կմ է, ջրհավաք ավազանը՝ 2560 կմ<sup>2</sup> (առանց Սևանա լճի): Արաքս է թափվում ծովի մակերևույթից 820 մ բարձրության վրա: Վերին հոսանքում առաջացնում է գալարներ, հովիտն ունի 10-11 կմ լայնություն: Միջին հոսանքում անցնում է նեղ ու խորը (120-150 մ) կիրճով և հերթափոխվում V-աձև ձորերով ու գոգավորություններով: Կան դարավանդներ, սողանքներ, կիրճի ուղղաձիգ լանջերին՝ բազալտային սյունաձև մերկացումներ (Արզնի, Երևան), հովտում՝ Հրազդան, Արզնի բնակավայրերի մոտ կան աղբյուրներ, որոնք օգտագործվում են Երևանի ջրամատակարարման համար, ինչպես նաև հանքային ջրեր: Ստորին հոսանքում հովիտն աստիճանաբար լայնանում է և դուրս գալիս Արարատյան դաշտ: Գետի ընդհանուր անկումը մոտ 1100 մ է: Համակարգում կան 340 գետակներ, որոնցից 25-ն ունեն 10 կմ-ից ավելի երկարություն, 3-ը՝ մինչև 50 կմ: Խոշոր վտակներն են Մարմարիկը, Ծաղկաձորը, Դալարը, Արայի գետը, Գետառը: Մնումը հիմնականում ստորգետնյա (51%) և հալոցքային (37%) է, վարարումը՝ գարնանը, հորդացումները՝ ամռանն ու աշնանը:

Երևան քաղաքը հարուստ է ստորերկրյա ջրային ռեսուրսներով, որոնց որոշ մասը քաղաքում և նրա հարակից տարածքներում բեռնաթափվում է աղբյուրների տեսքով, իսկ մնացածը ստորերկրյա տրանզիտ ճանապարհով շարժվում է դեպի Արարատյան արտեզյան ավազան: Երևանի տարածաշրջանի ստորերկրյա ջրերի խորությունների քարտեզը՝ Ձեռնարկության տեղադիրքի նշագրմամբ, ներկայացված է ստորև **Նկար 6.1**-ում<sup>8</sup>: Ինչպես երևում է նկարում՝ նախատեսվող գործունեության տարածքում ստորերկրյա ջրերի խորությունը 30 մ-ից ավելի է, ինչը ստորերկրյա ջրերի առկայության տեսանկյունից, տարածաշրջանի ամենախոր հատվածներից է:

Վերին պլիոցեն-չորրորդական հրաբխային լավաների ջրատար համալիրը մեծ տարածում ունի Երևան քաղաքում, Եղվարդի և Կոտայքի սարահարթերում և նրանց հարակից լեռնալանջերում, որոնք ներկայացված են անդեզիտաբազալտներով, բազալտներով և նրանց տարատեսակներով: Ստորերկրյա ջրերի սնման հիմնական աղբյուրը մթնոլորտային տեղումներն են, որոնց որոշ մասը, ներծծվելով լավաների սալերում, կուտակվում է լավատակ հնահովիտներում: Այդ ջրերի սնումը մասամբ էլ կատարվում է նախալեռնային գոտիներով անցնող հիդրոտեխնիկական կառույցների ջրերից կատարվող ֆիլտրացիոն կորուստներով:

<sup>8</sup>Երևան քաղաքի տարածքի գրունտային ջրերի տեղադրման խորությունների քարտեզ



**Նկ. 6.1.** Երևանի տարածաշրջանի ստորերկրյա ջրերի խորությունների քարտեզը և Ձեռնարկության տեղադիրքը


#### 6.4 Մեյսմատեկտոնիկ պայմանները

Հայաստանը գտնվում է բնական աղետների բարձր ռիսկային գոտում: Աղետի հավանականությունը և դրա ուժգնության աստիճանը բարձր են: Այն ամենաբարդ ռեյիեֆ ունեցող երկրներից է, որի տարածքը ենթակա է երկրաշարժերի, 1-4%-ը՝ սողանքների, 30%-ը՝ սելավների և հեղեղումների, 0-5%-ը՝ փուլգումների ու քարաթափումների, 12%-ը՝ ցրտահարությունների, 15%-ը՝ երաշտի, 17%-ը՝ կարկտահարման:

Սողանքները բավականին տարածված են Հայաստանում, և վերջին տարիներին դրանց առաջացման թիվը և ծավալներն աճել են՝ պայմանավորված անտառահատումների, ջրային ռեսուրսների և ոռոգման կառավարման ոչ պատշաճ կազմակերպումով, ինչպես նաև սողանքների մեջ շրջանառվող ջրային մնացորդի փոփոխությամբ: Հայաստանում սողանքների ենթակա տարածքը կազմում է 122,000 հա (Հայաստանի տարածքի մոտ 4.1%-ը) և բնակավայրերի 35%-ը: Երևանը, Հայաստանի այլ շրջանների համեմատությամբ, ունի սողանքների ավելի ցածր ռիսկ, այդուհանդերձ սողանքներն առաջանում են քաղաքի տարածքի 6%-ում և հիմնականում խիտ բաշխվածություն ունեն Երևան քաղաքի տարածքի հարավային և արևելյան լանջային հարթավայրերում: Սողանքների չափերը տատանվում են փոքրից՝ 100 մ երկարությամբ և 0.5 հա մակերեսով, մինչև մեծ՝ 1 կմ երկարությամբ և 1.5 կմ<sup>2</sup> մակերեսով: Մեծ սողանքներ կան հատկապես Նուբարաշեն և Էրեբունի համայնքների հարավային և արևելյան մասերում:


Համաձայն քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված ՀՀԾՆ 20.04 "Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր" շինարարական նորմերի դիտարկվող շրջանը գտնվում է I գոտում, որի սեյսմիկության քանակական գնահատականը բնութագրվում է սպասվող մաքսիմալ արագացմամբ՝  $A_{մաք}=0.3g$ , գրունտների հորիզոնական արագացման մեծությունը՝  $a=300$  սմ/վրկ<sup>2</sup>:

Տարածաշրջանի սեյսմիկ և սելավային ռիսկերի գոտիականությունը ներկայացված է ստորև **Նկար 6.2**-ում, իսկ ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզը **Նկար 6.3**-ում: Գոտիականության քարտեզից երևում է, որ արտադրական հրապարակը գտնվում է ցածր սելավային և բարձր սեյսմիկ ռիսկերի գոտիականության մեջ:



**Նկ. 6.2. Տարածաշրջանի սեյսմիկ և սելավային ռիսկերի գոտիականությունը<sup>9</sup>**

<sup>9</sup>Հայաստանի ջրային ռեսուրսների առյուծ, Երևան-2008



Նկ. 6.3. ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ

## 6.5 Տարածաշրջանի հողերի նկարագիրը

Հողային ծածկույթը ներկայացված է կիսասանապատային գորշ հողերով, որոնք ձևավորվել են տեղակուտակ, տեղակուտակ-ողողաբերուկային խճային և խճաբեկորային կարբոնատային մայրտեսակների վրա: Այս հողերը ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, բավականաչափ կմախքային զանգվածի պարունակությամբ: Ստրուկտուրան փոշե-հատիկային կամ վառողանման է, ջրակայուն ագրեգատների քանակը չի գերազանցում 30-35%: Առանձին տեղերում հողի խորը շերտերում հաճախ բավական քանակությամբ ջրալույծ աղեր են կուտակվում (մինչև 1-1.5%): Կիսասանապատային գորշ հողերը զարգանում են խիստ ցամաքային, շոգ կլիմայի և կիսասանապատային բուսածածկույթի պայմաններում, կարբոնատներով և խճով հարուստ ավազա-կավերի և թեթև կավավազների վրա: Բնորոշվում են վերին հորիզոնի շերտավոր-թեփուկային, իսկ միջին հորիզոնում՝ անկայուն կնձկային ստրուկտուրայով: Իյուվիալ-կարբոնատային հորիզոնի զգալի մասը խիստ ցեմենտացված է: Հողերն աչքի են ընկնում հումուսի փոքր քանակով (1-2%), միջին և ավելի փոքր կլանման ծավալով, թույլ հիմնային ռեակցիայով, քարքարոտությամբ և ուժեղ կարբոնատացվածությամբ: Հողերը հիմնականում ունեն սակավ հզորություն, միջին կավավազային (62%) մեխանիկական կազմ, ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48 գ/սմ<sup>3</sup> սահմաններում, տեսակարար զանգվածը՝ 1.34-1.42 գ/սմ<sup>3</sup>, ընդհանուր ծակոտկենությունը՝ 46-48%:



## 6.6 Կլիման և օդերևութաբանական պայմանները

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման անապատային-կիսաանապատային է, ավելի բարձրում՝ չոր տափաստանային: Շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Տարածաշրջանը ցամաքային կլիմային բնորոշ հատկանիշների շնորհիվ պարզ արտահայտվում են տարվա բոլոր չորս եղանակները: Ձմեռները ցուրտ են, երբեմն՝ ձնառատ: Ամառը հիմնականում շոգ է, չորային: Տեղումների հիմնական մասը թափվում է գարնանը, մասամբ՝ աշնանը: Տեղումների սակավությանը զուգահեռ՝ շատ են արևային ժամերը, երկինքը պարզ է հիմնականում ամբողջ տարվա ընթացքում: Մառախուլապատ կամ ամպամած եղանակը, հատկապես մայիս-սեպտեմբեր ամիսներին, հազվադեպ երևույթ է:

### 6.6.1 Ջերմաստիճանը

Տարածաշրջանում օդի բացարձակ նվազագույնը աստիճանը  $-28^{\circ}\text{C}$  է: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է  $42^{\circ}\text{C}$ , ամենատաք ամսվա միջին առավելագույնը՝  $25.8^{\circ}\text{C}$ : Ըստ ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն" շինարարական նորմերի, տարածաշրջանում օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանները բերված են ստորև **Աղյուսակ 6.1**-ում:

**Աղյուսակ 6.1 Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը,  $^{\circ}\text{C}$**

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, $^{\circ}\text{C}$											Միջին տարեկան, $^{\circ}\text{C}$	Բացարձակ	Բացարձակ	
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր				Դեկտեմբեր
Երևան "Էրեբունի"	888	-3.6	-1	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-28	42

### 6.6.2 Խոնավությունը

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 61%: Ամենացուրտ ամսվա օդի միջին հարաբերական խոնավությունը կազմում է 67%, իսկ ամենաշոգ ամսվանը՝ 28%: Ըստ ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն" շինարարական նորմերի, տարածաշրջանում օդի հարաբերական խոնավության տվյալները բերված են ստորև **Աղյուսակ 6.2**-ում:

**Աղյուսակ 6.2 Օդի հարաբերական խոնավության տվյալները**

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %												Միջին ամսական ժամը 15-ին		
	ըստ ամիսների											Միջին տարեկան, %	ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր				Դեկտեմբեր
Երևան "Էրեբունի"	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61	67	28

### 6.6.3 Մթնոլորտային տեղումները

Միջին տարեկան տեղումների քանակը կազմում է 353 մմ: Առավելագույնը դիտվում է մայիս ամսին՝ 55 մմ, նվազագույնը օգոստոս ամիսին՝ 8 մմ: Ըստ ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն" շինարարական նորմերի, տարածաշրջանում մթնոլորտային տեղումների վերաբերյալ տվյալները բերված են ստորև **Աղյուսակ 6.3**-ում:


**Աղյուսակ 6.3 Մթնոլորտային տեղումները, %**

Բնակավայրի, օրերուսումնառության և անվանումը	Տեղումների քանակը												Ձևաձևկույթ			
	միջին ամսական օրական առավելագույն , մմ												Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթի օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	
	ըստ ամիսների											Տարեկան				
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր		Դեկտեմբեր			
Երևան "Էրեբունի"	24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291	58	47	
	24	23	34	29	42	34	29	37	51	35	26	28	51			


### 6.6.4 Քամի

Դիտարկվող տարածքում քամու միջին արագությունների բաշխվածությունը տարվա տարբեր ժամանակաշրջաններում բերված է ստորև **Նկար 6.4**-ում:

Քամու միջին արագության ամենամեծ արժեքը գրանցված է հուլիս ամսին հյուսիս-արևելյան ուղղությամբ՝ 5.7 մ/վ արագությամբ: Տարվա տարբեր ժամանակաշրջաններում քամու միջին ամսական արագության ամենամեծ արժեքը ստացվում է հուլիս ամսին և կազմում է 2.8 մ/վ, իսկ միջին տարեկան արագությունը հավասար է 1.5 մ/վ: Ուժեղ քամիներով օրերի քանակը ( $\geq 15$  մ/վ) 29-ն է: Քամու ուղղությունների կրկնելիության պատկերները բերված են ստորև **Նկար 6.5**-ում: Ամենամեծ կրկնելիությունը դիտվում է հուլիս ամսին հյուսիս-արևելյան ուղղությամբ և կազմում է 28%:



Նկ. 6.4. Քամու միջին արագությունների բաշխվածությունը



Նկ. 6.5. Քամու ուղղությունների կրկնելիությունը

## 6.7 Բուսական և կենդանական աշխարհը

### 6.7.1 Բուսական աշխարհը

Երևանի տարածաշրջանի բուսական աշխարհը ներառված է Երևանի ֆլորիստիկ շրջանում: Այստեղ տարածված են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները՝ օշինդրա-էֆեմերային, հալոֆիլ և պսամոֆիլ անապատային բուսատեսակներով: Դրանցից են՝ Օշան հավանքանման (*Salsola ericoides*), Օշան գորշ (*Salsola cana*), Գեղածնկիկ մատիտեղանման (*Calligonum poligonoides*), Օշինդր սովորական (*Artemisia vulgaris*), Ավելաբույս գետնատարած (*Kochia prostrata*), Լերդախոտ ալեհեր (*Teucrium polium*) և Փետրախոտ սոխուկավոր (*Poa bulbosa*):

Հայաստանում բարձր գյուղատնտեսական նշանակություն ունեցող մի շարք բույսերի/մշակաբույսերի տեսակներ հանդիպում են նաև Երևանի տարածաշրջանում, որոնք ներկայացված են ստորև **Աղյուսակ 6.4**-ում, իսկ դրանցից որոշների լուսանկարները բերված են **Նկար 6.6**-ում:

**Աղյուսակ 6.4.** Երևանի տարածաշրջանում հանդիպող, բարձր գյուղատնտեսական նշանակություն ունեցող բույսերի/մշակաբույսերի տեսակները և դրանց կիրառման ոլորտը

№	Անվանումը		Կիրառման ոլորտը
	Լատիներեն (Գիտական անվանում)	Հայերեն (Գրական անվանում)	
1	<i>Amaranthus retroflexus</i> L.	Հավակատար սովորական	Սննդային, կերային
2	<i>Chaerophyllum bulbosum</i> L.	Շուշանբանջար սոխուկավոր	Սննդային, մեղրատու, դեղագործական
3	<i>Chaerophyllum macrospermum</i>	Շուշանբանջար խոշորապտուղ	Սննդային, մեղրատու, դեղագործական
4	<i>Falcaria vulgaris</i> Bernh.	Սիրեխ սովորական	Սննդային, կերակրի, դեղագործական
5	<i>Tragopogon dubius</i> Scop.	Սինձ կասկածելի	Սննդային, գեղագարդային
6	<i>Chenopodium album</i> L.	Թելուկ սպիտակ	Սննդային, անասնակեր
7	<i>Spinacia tetrandra</i> Steven ex M. Bieb.	Սպանախ քառառէջ	Սննդային
8	<i>Polygonatum verticillatum</i>	Սինդրիկ օղակավոր	Սննդային, դեղագործական
9	<i>Polygonatum orientale</i> Desf	Սինդրիկ արևելյան	Սննդային և դեղագործական
10	<i>Hippophaë rhamnoides</i> L.	Զիչխան դժնիկանման	Սննդային, դեղագործական, էոքոպալաչտական, գեղագարդային, ներկատու, մեղրատու
11	<i>Glycyrrhiza glabra</i> L.	Մատուտակ մերկ	Սննդային, դեղագործական
12	<i>Grossularia reclinata</i> (L.) Mill.	Կոկոռչենի սովորական	Սննդային, դեղագործական, մեղրատու
13	<i>Thymus serpyllum</i> L.	Ուրց սողացող	Սննդային, դեղագործական, մեղրատու, օճանելիքի արտադրություն

№	Անվանումը		Կիրառման ոլորտը
	Լատիներեն (Գիտական անվանում)	Հայերեն (Գրական անվանում)	
14	Malva silvestris L.	Փիփերթ անտառային	Սննդային, դեղագործական, գեղագարդային
15	Rumex crispus L.	Ավելուկ գանգուր	Սննդային, դեղագործական
16	Ziziphus jujuba Mill	Ունաբ սովորական	Սննդային, դեղագործական
17	Crataegus pontica K.Koch	Սզնի պոնտական	Սննդային, դեղագործական, մեղրատու, գեղագարդային
18	Prunus spinosa L.	Սալոր փշավոր	Սննդային, դեղագործական, մեղրատու, տեխնիկական, հողապաշտպան և գեղագարդային
19	Pyrus sosnovskyi Fed.	Տանձենի Սոսնովսկու	Սննդային, դեղագործական, մեղրատու
20	Rosa canina L.	Մաարենի շան	Սննդային և դեղագործական
21	Rosa hemisphaerica Herrm	Մաարենի կիսագնդաձև	Սննդային և դեղագործական



Շուշանբանջար - *Chaerophyllum macrospermum*



Սպանախ բոստանիչ - *Spinacia tetrandra* Steven ex M. Bieb.



Փիփերթ անտառային - *Malva silvestris* L.



Սինձ կաակածեղի - *Tragopogon dubius* Scop.



Կոկոռննի ստորակալան - *Grossularia reclinata* (L.) Mill.



Չիչխան դժնիկանման - *Hippophaë rhamnoides* L.



Սպոր փշափոր - *Prunus spinosa* L.



Ունաբ ստորակալան - *Ziziphus jujuba* Mill

**Նկ. 6.6.** Երևանի տարածաշրջանում հանդիպող, բարձր գյուղատնտեսական նշանակություն ունեցող բույսերի/մշակաբույսերի տեսակներից որոշների լուսանկարները

Երևանի տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և Բնության պահպանության միջազգային միության (այսուհետ՝ "ԲՊՄՄ") Կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակների ցուցակը բերված է ստորև **Աղյուսակ 6.5**-ում: Բուսատեսակներից որոշների լուսանկարները բերված են **Նկար 6.7**-ում:

**Աղյուսակ 6.5.** Երևանի տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակները

№	Բուսատեսակներ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան <sup>10</sup>
	Լատիներեն	Հայերեն	
1	<i>Acorus calamus</i> L.	Խնկեղեգ ճահճային	EN
2	<i>Sternbergia colchiciflora</i> Waldst. et Kit.	Շտերնբերգիա շնդեղածաղկային	EN
3	<i>Actinolema macrolema</i> Boiss	Ակտինոլեմ խոշորաբաժակ	EN
4	<i>Hohenackeria exscapa</i> (Stev.) K.-Pol.	Հոհենակերիա անցողուն	EN
5	<i>Szovitsia callicarpa</i> Fisch. & C.A.Mey.	Շովիցիա գեղապտուղ	EN
6	<i>Amberboa moschata</i> (L.) DC.	Վարդատերեփուկ մուշկային	EN

<sup>10</sup>EX (*Extinct*) - անհետացած տեսակ,  
 CR (*Critically Endangered*) - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ,  
 EN (*Endangered*) - վտանգված տեսակ,  
 VU (*Vulnerable*) - խոցելի տեսակ,  
 DD (*Data Deficient*) - տվյալների անբավարարություն և այլն

№	Բուսատեսակներ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան <sup>10</sup>
	Լատիներեն	Հայերեն	
7	<i>Centaurea erivanensis</i> (Lipsky) Bordz.	Տերեփուկ երևանյան	VU
8	<i>Chardinia macrocarpa</i> K.Koch	Շարդինիա խոշորապտուղ	VU
9	<i>Cichorium glandulosum</i> Boiss. et Huet	Ճարնատուկ գեղձավոր	VU
10	<i>Gundelia rosea</i> M.Hossain & R.A.Al-Taey.	Կանգար վարդագույն	EN
11	<i>Asperuginoides axillaris</i>	Բոխինգերա անութային	CR
12	<i>Erysimum eginense</i> Bornm.	Չազախտո էգինյան	EN
13	<i>Lepidium lyratum</i> L.	Նվարդակ քնարաձև	EN
14	<i>Beta lomatogona</i> Fisch. et C. A. Mey.	Ճակնդեղ բաժանապտուղ	CR
15	<i>Halanthium kulpianum</i> (K. Koch) Bunge.	Աղածաղիկ կուլպական	EN
16	<i>Salsola tamamschjanae</i> Iljin	Օշան Թամամշյանի	EN
17	<i>Merendera sobolifera</i> Fisch. & C.A.Mey.	Խլուպուզ ընձյուղավոր	CR
18	<i>Euphorbia aleppica</i> L.	Իշակաթնուկ հալեպական	CR
19	<i>Astragalus camptoceras</i> Bunge	Գազ կորանեղջյուրավոր	EN
20	<i>Astragalus guttatus</i> Banks et Sol.	Գազ բծավոր	EN
21	<i>Onobrychis hajastana</i> Grossh.	Կորնգան հայաստանի	EN
22	<i>Gentiana olivieri</i> Griseb.	Բօզ Օլիվյեի	VU
23	<i>Bellevalia longistyla</i> (Miscz.) Grossh.	Բելևալիա արկարառնակ	EN
24	<i>Iris elegantissima</i> Sosn.	Հիրիկ նրբագեղ	EN
25	<i>Malvella sherardiana</i> (L.) Jaub.	Մոլոշիկ Ժերարի	EN
26	<i>Aegilops crassa</i> Boiss.	Այծակն հաստ	CR
27	<i>Rhizocephalus orientalis</i> Boiss.	Արմատագլխիկ արևելյան	VU
28	<i>Triticum araraticum</i> Jakubz.	Յորեն արարատյան	VU
29	<i>Triticum urartu</i> Tumanian ex Gandilyan	Յորեն ուրարտու	EN
30	<i>Thalictrum isopyroides</i> C. A. Mey.	Քնձմնձուկ իզոպիրոնման	VU
31	<i>Tamarix octandra</i> Bunge	Կարմրան ութառէջ	EN
32	<i>S. punctipes</i> (Peck) Singer	Յուղասուն մայրու	CR



Վարդասերևիտուկ մուշկային - *Amberboa moschata* (L.) DC.



Ճակնդեղ բաժանապտուղ - *Beta lomatogona* Fisch. et C. A. Mey.



Բշակաթնուկ հայեպական - *Euphorbia aleppica* L.



Բօզ Օլիվեի - *Gentiana olivieri* Griseb.



Կորնգան հայաստանի - *Onobrychis hajastana* Grossh.



Հոհենակերիս անցողուն - *Hohenackeria exscapa* (Stev.) K.-Pol.



Օշան Թամանշյանի - *Salsola tamamschjanae* Iljin



Քնձմնձուկ իզոպիրոնման - *Thalictrum isopyroides* C. A. Mey.

**Նկ. 6.7. Տարածաշրջանում հանդիպող` ՀՀ կարմիր գրքում և ԲԳՄՄ Կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակներից որոշների լուսանկարները**

**6.7.2 Կենդանական աշխարհը**

Երևանի տարածաշրջանի շրջակա միջավայրի բաղադրիչները կրում են մարդու տարատեսակ գործունեության ազդեցությունը, այդ իսկ պատճառով բնական պայմաններում հանդիպող կենդանիները զգալի քիչ են: Տարածաշրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Ստորև **Աղյուսակ 6.6**-ում ներկայացված են Երևանի տարածաշրջանում հանդիպող կենդանական աշխարհին պատկանող տեսակները, որոնցից որոշների լուսանկարները բերված են **Նկար 6.8**-ում:



**Աղյուսակ 6.6. Տարածաշրջանում հաճախ հանդիպող կենդանատեսակները**

№	Անվանումը	
	Լատիներեն (Գիտական անվանում)	Հայերեն (Գրական անվանում)
1	<i>Rana ridibunda</i>	Լճային գորտը
2	<i>Bufo variabilis</i>	Կանաչ դորոշ
3	<i>Pelobates syriacus</i>	Միրիական սխտորագորտը
4	<i>Eumeces schneideri</i>	Երկարատտ սցինկը
5	<i>Laudakia caucasia</i>	Կովկասյան ազմա
6	<i>Typhlops vermicularis</i>	Կույր օձը
7	<i>Dolichophis schmidt</i>	Շմիդտի սահնօձ
8	<i>Eirenis collaris</i>	Վզնոցավոր էյրենիս
9	<i>Eirenis punctatolineatus</i>	Հայկական էյրենիս
10	<i>Hemorrhois nummifer</i>	Կապարագույն Սահուկ
11	<i>Telescopus fallax</i>	Կատված
12	<i>Macrovipera lebetina</i>	Գյուրգա/(Դագաղային Իժ, Յաթաղան)
13	<i>Corvus corone</i>	Մոխրագույն ագռավ
14	<i>Anas platyrhynchos</i>	Կռնչան բադ
15	<i>Gallinula chloropus</i>	Եղեգնահավ
16	Common quail	Լոր
17	<i>Columba livia</i>	Թխակապույտ աղավնի
18	<i>Philomachus pugnax</i>	Կոցար
19	<i>Erinaceus concolor</i>	Արևելատերոպական ոզնի
20	<i>Pipistrellus kuhlii</i>	Միջերկրածովյան փոքրաչղջիկ
21	<i>Pipistrellus pipistrellus</i>	Թզուկ փոքրաչղջիկ
22	<i>Sylvaemus witherbyi</i>	Սովորական դաշտամուկ
23	<i>Rattus norvegicus</i>	Մոխրագույն առնետ



*Pelobates syriacus*



*Rana ridibunda*



Միդիսկան սխտրագորտը - *Dolichophis schmidti*



Հայկական Էրենիս - *Eirenis punctatolineatus*



Մոխրագույն առնետ - *Rattus norvegicus*



Արևելասլիտակյան ոզնի - *Erinaceus concolor*



Կովկասյան ագնու - *Laudakia caucasia*



Երկարատու սցինկր - *Eumeces schneideri*



Լոր - *Common quail*



Մոխրագույն ագռավ - *Corvus corone*

**Նկ. 6.8. Տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակներից որոշների լուսանկարները**

## 6.8 Հատուկ պահպանվող տարածքներ

Նախատեսվող գործունեության վայրը գտնվում է Երևան քաղաքի Ծենգավիթ վարչական շրջանում: Նախատեսվող գործունեության վայրից մոտ 12 կմ հեռավորության վրա գտնվում է "Էրեբունի" արգելոցը, որը կազմավորվել է 1981 թվականին: Այն գտնվում է Երևան քաղաքի կենտրոնից 8 կմ դեպի հարավ-արևելք՝ Էրեբունի վարչական շրջանի տարածքում, կիսանապատային և լեռնատափաստանային գոտիների անցումային հատվածում, ծովի մակարդակից 1300-1450 մ բարձրության վրա: "Էրեբունի" արգելոցը հիմնավորվել է դաշտավուկագիների վայրի ազգակիցների (մասնավորապես վայրի ցորենների աշխարհում եզակի գենոֆոնդի) պահպանության նպատակով: Այժմ արգելոցն զբաղեցնում է 120 հա տարածք:

## 6.9 Աղմուկի, թրթռման, օդի, ջրի և հողի որակի մշտադիտարկում

Ձեռնարկության արտադրական և վարչական ստորաբաժանումներում, տարածքում և շրջակա հնարավոր ազդեցության գոտիներում "ԻՆՎԻ" ՍՊԸ-ն նախատեսում է իրականացնել օդում փոշու և ածխածնի օքսիդի կոնցենտրացիաների, հողի որակի, ինչպես նաև աղմուկի և թրթռման մակարդակների մշտադիտարկում, որի ծրագիրը բերված է **Աղյուսակ 6.7**-ում:

**Աղյուսակ 6.7. Օդի որակի, աղմուկի և թրթռման մշտադիտարկման ծրագիր**

№	Մշտադիտարկման գործոնը	Մշտադիտարկման վայրը	Պարբերականությունը	Պատասխանատու
1	Մթնոլորտային օդ (փոշի, ածխածնի օքսիդ և այլն)	ՊՎՔ արտադրության արտադրամաս Այլումինի ձուլման արտադրամաս Պղնձի ձուլման արտադրամաս Փայտամշակման տեղամաս Վարչական տարածք Բաց հրապարակ Մոտակա բնակելի շենք <sup>11</sup> Մոտակա բնակելի տուն <sup>6</sup>	Եռամսյակային	Կապալառու կազմակերպություն
2	Աղմուկ	Այլումինի ձուլման արտադրամաս Պղնձի ձուլման արտադրամաս Այլումինի ձգման արտադրամաս Պղնձի ձգման արտադրամաս Վարչական տարածք Բաց հրապարակ Մոտակա բնակելի շենք <sup>6</sup> Մոտակա բնակելի տուն <sup>6</sup>	Եռամսյակային	Կապալառու կազմակերպություն
3	Թրթռում	Այլումինի ձուլման արտադրամաս	Եռամսյակային	Կապալառու կազմակերպություն

<sup>11</sup>Տեղադիրքը նկարագրված է **Բաժին 6.10**-ում

№	Մշտադիտարկման գործոնը	Մշտադիտարկման վայրը	Պարբերականությունը	Պատասխանատու
		Պղնձի ձուլման արտադրամաս		
		Այլումինի ձգման արտադրամաս		
		Պղնձի ձգման արտադրամաս		
		Վարչական տարածք		
		Բաց հրապարակ		
		Մոտակա բնակելի շենք <sup>6</sup>		
		Մոտակա բնակելի տուն <sup>6</sup>		
4	Հողի աղտոտվածություն	Մոտակա բնակելի շենք / տուն <sup>6</sup>	Տարեկան	Քիմիական լաբորատորիա

Օդի որակի, աղմուկի և թրթռման մշտադիտարկման արդյունքները համեմատվելու են ՀՀ, իսկ որոշ դեպքերում նաև միջազգային ուղեցույցներով սահմանված սանիտարահիգիենիկ չափորոշիչների հետ, որոնք ներկայացված են **Աղյուսակ 6.8**-ում աղմուկի, **Աղյուսակ 6.9**-ում փոշու և ածխածնի օքսիդի (CO), **Աղյուսակ 6.10**-ում թրթռման համար: Հողի որակին ներկայացվող պահանջները սահմանված են ՀՀ Առողջապահության նախարարի 25.01.2010թ.-ի թիվ 01-Ն հրամանով հաստատված N2.1.7.003-10 Սանիտարական կանոններ և նորմեր "Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ"<sup>12</sup> փաստաթղթով:

**Աղյուսակ 6.8. Աղմուկի սահմանային թույլատրելի մակարդակը**

№	Սենքերի սահմանային	Զայնի համարժեք թույլատրելի մակարդակները, դԲԱ	Զայնի առավելագույն թույլատրելի մակարդակները, դԲԱ
1	Աշխատատեղ (խատատեղվելագույն թույլատրելի մակարդակները, դԲԱացվածգային ուղեցույցներով սահմ	80	
2	Բնակելի շենքերին, պոլիկլինիկաների, ամբուլատորիաների, դիսպանսերների, հանգստյան տների, պանսիոնատների, ծերերի և հաշմանդամների համար տուն-ինտերնատների, մանկապարտեզների, դպրոցների և ուսումնական այլ հաստատությունների, գրադարանների շենքերին անմիջապես հարող տարածքներ	07:00-23:00 55 <sup>13</sup>	70 <sup>7</sup>
		23:00-07:00 45 <sup>7</sup>	60 <sup>7</sup>
3	Արդյունաբերական/կոմերցիան գոտի	07:00-22:00 70 <sup>14</sup>	-
		22:00-07:00	

<sup>12</sup><https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=146741>

<sup>13</sup>Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերը (<https://www.arlis.am/documentview.aspx?docid=163246>)

<sup>14</sup>IFC/World Health Organization (WHO). Air Quality Guidelines Global Update, 2005

([https://www.ifc.org/wps/wcm/connect/topics\\_ext\\_content/ifc\\_external\\_corporate\\_site/sustainability-at-ifc/policies-standards/ehs-guidelines](https://www.ifc.org/wps/wcm/connect/topics_ext_content/ifc_external_corporate_site/sustainability-at-ifc/policies-standards/ehs-guidelines))

**Աղյուսակ 6.9. Փոշու (PM2.5 և PM10) և ածխածնի օքսիդի օրական միջին և առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները<sup>15</sup>**

№	Վնասակար նյութի անվանումը	ՍԹԿ (մգ/մ <sup>3</sup> )		Վտանգավորության դասը
		Առավելագույն միանվագ	Միջին օրական	
1	Կախված մասնիկներ PM2.5	0.16	0.035	-
2	Կախված մասնիկներ PM10	0.3	0.06	-
3	Ածխածնի օքսիդ (CO)	5	3	4

**Աղյուսակ 6.10. Թրթռման արագացման սահմանային թույլատրելի մակարդակները**

№	Ընդհանուր թրթռում	Ճշգրտված և համարժեքային ճշգրտված սահմանային թույլատրելի արժեքները	
		մ/վ <sup>2</sup>	դԲ
1	Տրանսպորտատեխնոլոգիական թրթռում (2-րդ կարգ)	0.28	109
2	Տեխնոլոգիական թրթռում (3-րդ կարգի ա)	0.1	100
3	Տեխնոլոգիական թրթռում (3-րդ կարգի բ)	0.04	92
4	Տեխնոլոգիական թրթռում (3-րդ կարգի գ)	0.014	83
5	Բնակելի սենքերում, հիվանդասենյակներում, հանգստյան տներում	0.004	72

**6.10 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակը**

Նախատեսվող գործունեության վայրը գտնվում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանում: Շենգավիթ վարչական շրջանի սոցիալ-տնտեսական իրավիճակի նկարագրության համար հիմք է հանդիսացել Երևան քաղաքի ավագանու կողմից 31.10.2017թ.-ին ընդունված "Երևանի զարգացման 2018-2022թթ. հնգամյա ծրագիր" թիվ 56-Ն որոշումը:

**Շենգավիթ**

Մակերեսը՝ 4090 հա,

Բնակչությունը՝ 137400 մարդ:

Բարձրությունը ծովի մակարդակից՝ 850-1300 մ:

Շենգավիթ վարչական շրջանը սահմանակից է Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա- Սեբաստիա և Նուբարաշեն վարչական շրջաններին և Արարատի մարզին: Վարչական շրջանն ընդգրկում է Նոր Խարբերդ, Չարբախ, Ն. Չարբախ, Վ.Շենգավիթ, Ն.Շենգավիթ, Ալրացիա, Նորագավիթ թաղամասերը, Գ.Նժդեհ, Բագրատունյաց, Արշակունյաց, Արտաշիսյան և հարակից փողոցներով նյութավորված բնակելի զանգվածները:

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

<sup>15</sup>Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին թիվ 160-Ն ՀՀ կառավարության որոշում (<https://www.arlis.am/documentview.aspx?docid=163276>)

Ծենգավիթ վարչական շրջանն ունի 636 բազմաբնակարան բնակելի շենք, 138-ը՝ բարձրահարկ (9-16 հարկանի), 279 վերելակ: Հաշվառված է 5 գետնանցում, 3 վերգետնյա անցում: Փողոցների երկարությունը կազմում է 147,7 կմ:

Կրթություն, մշակույթ և սպորտ

Ծենգավիթ վարչական շրջանում գործում է 29 դպրոց (4 ավագ, 25 հիմնական), 22 մանկապարտեզ, որից 1-ը՝ քաղաքային ենթակայության, 4 գրադարան, 4 մարզադպրոց ("Երևանի Ծենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց" ՀՈԱԿ, "Երևանի ակրոբատիկայի և գեղարվեստական մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց" ՀՈԱԿ, "Երևանի սեղանի թենիսի և թենիսի մանկապատանեկան մարզադպրոց" ՀՈԱԿ, "Երևանի Ծենգավիթի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց" ՀՈԱԿ), 1 մարզակումբ ("Երևանի Ծենգավիթի նետաձգության մարզակումբ" ՀՈԱԿ), 2 երաժշտական դպրոց ("Երևանի Ա.Տիգրանյանի անվան երաժշտական դպրոց" ՀՈԱԿ, "Երևանի Ս. Ջրբաշյանի անվան երաժշտական դպրոց" ՀՈԱԿ) և 3 կրթամշակութային հիմնարկ (Թիվ 5 մշակույթի, պատանեկան ստեղծագործական և Կ. Նիկողոսյանի անվ. մանկապատանեկան արվեստի կենտրոններ):


Կանաչ տարածքների պահպանում և խնամք

Ծենգավիթ վարչական շրջանի կանաչապատ տարածքների մակերեսը կազմում է 62,58 հա, ոռոգման ցանցի երկարությունը 105.3 կմ է, պուրակների, այգիների և հանգստի գոտիները 4 կմ է: Վարչական շրջանի ջրամատակարարումը իրականացվում է 5 աղբյուրներից: Ծրջանում գործում է 1 ջրամբար:

Մոգիայական սպահովություն և առողջապահություն

Վարչական շրջանի տարածքում գործում են 2 բժշկական կենտրոն ("Ծենգավիթ", "Սուրբ Աստվածամայր"), 2 ատամնաբուժական պոլիկլինիկա, Հիգիենիկ և հակահամաճարակային կենտրոնը: Կան բժշկական ծառայություններ մատուցող այլ մասնավոր կլինիկաներ: "Առաքելություն Հայաստան" ՀԿ ենթակայությամբ գործում է բարեգործական ճաշարան, որից օգտվում են շուրջ 151 շահառուներ:

Ստորև **Նկար 6.9**-ում ներկայացված է "ԻՆ-ՎԻ" ՍՊԸ-ի և մոտակա բնակելի տների (զգայուն կլանիչների) ու արտադրական օբյեկտների տեղադիրքը: Ինչպես երևում է **Նկար 6.9**-ից, արտադրամասից դեպի հյուսիս-արևմուտք գտնվում է "Մանիթեք" ՍՊԸ-ն, դեպի արևելք՝ 300 մ հեռավորության վրա "Ար Գրուպ" ՍՊԸ-ն, իսկ դեպի հարավ-արևելք՝ 200 մ հեռավորության վրա "Շող" ձեթի և յուղի կոմբինատը: Չգայուն կլանիչները՝ մոտակա բնակելի շենքեր և տունը, գտնվում են արտադրամասից դեպի հյուսիս՝ համապատասխանաբար 350 մ և 310 մ հեռավորությունների վրա:



Նկ. 6.9. Զեռնարկության հեռավորությունը մոտակա բնակելի և արտադրական օբյեկտներից

### 6.11 Պատմամշակութային և բնության հուշարձանները

ՀՀ կառավարության 2004 թ.-ի հոկտեմբերի 7-ի "Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակը հաստատելու մասին" №1616-Ն որոշման<sup>16</sup> համաձայն Շենգավիթ վարչական շրջանում կան թվով 36 պատմամշակութային հուշարձան/ հուշարձանախումբ, որոնք ներկայացված են ստորև **Աղյուսակ 6.11**-ում:

**Աղյուսակ 6.11** Շենգավիթ վարչական շրջանի պատմամշակութային հուշարձանները

№	Հուշարձանախումբը, հուշարձանը	Կառուցման ժամանակաշրջանը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը հանրապետական/տեղական	Ծանոթություն
1	Բարձրաքանդակներ "Մասունցի Դավիթ"	1980 թ.	Սևանի փ. 13	S	Քանդակագործ՝ Ա. Հովսեփյան, Մետրոպոլիտենի "Մասունցի Դավիթ" կայարանի շենքում
2	Բնակատեղի Շենգավիթ	մ.թ.ա. 4-3 հազարամյակ	հարավ-արևմտյան մասում, Երևանյան լճի արևելյան հրվանդանին	<	
3	Բնակելի տուն	1953-1956 թթ.	Արշակունյաց պ. 62	S	Ճարտարագետ՝ Ս. Մանուկյան, Չ. Տոնիկյան
4	Բնակելի տուն	18-19 դդ.	Նորագավթի 7-րդ փ. 58ա	S	

<sup>16</sup><https://www.arlis.am/documentview.aspx?docid=154750>

№	Հուշարձանա-խումբը, հուշարձանը	Կառուցման ժամանակաշրջանը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը հանրապետական/տեղական	Ծանոթություն
5	Բնակելի տների համալիր, Սինթետիկ կաուչուկի գործարանի բնակելի շենքերը	1932 թ.	Բագրատունյաց, Եղբայրության, Մանանդյան փ. տարածքում	S	Ճարտագետ՝ Գ. Քոչար Մ. Մազմանյան, Հ. Մարգարյան, Ս. Սաֆարյան, Ա. Ահարոնյան
6	Գերեզման Ծուռանիկ Կուրդիկյանի	1927 թ., 1952 թ.	Արշակունյաց պ. 28/5, Կոմիտասի անվան զբոսայգում	Հ	Քանդակագործ՝ Ս. Բաղդասարյան Ճարտագետ՝ Ջ. Թորոսյան
7	Գերեզմանոց	12-19 դդ.	Նորագավթի 7-րդ փ. 1-ին նրբանցք	Հ	
8	Գերեզմանոց	19-20 դդ.	Նորագավթի 6-րդ փողոց	S	Թիվ 86 բնակելի տան հարևանությամբ
9	Դամբարան	մ.թ.ա. 8-7 դդ.	Արշակունյաց պողոտա 34, Ավտոագրեզատների գործարանի տարածքում	Հ	1984-ին նախագծվել և իրականացվել է պահպանական կառույց, նախագիծը ճարտարագետ՝ Վ. Ճաղարյան
10	Եկեղեցական համալիր Նորագավթի Սուրբ Գևորգ (Ծիրանավոր Սբ. Գևորգ)	4-7 դ., 13-17 դդ.	Նորագավթի 7-րդ փ.	Հ	
11	Հուշարձան Հունան Ավետիսյանի	1956 թ.	Բագրատունյաց փ. 23	S	Թիվ 74 համանուն դպրոցի առջև, քանդակագործ՝ Թերեզա Միրզոյան, ճարտարապետ՝ Էդուարդ Սարապյան
12	Հուշարձան Վիսարիոն Բելինսկու	1957 թ.	Գարեգին Նժդեհի փ. 22	S	Թիվ 38 համանուն դպրոցի առջև, քանդակագործ՝ Արա Հարությունյան, ճարտարապետ՝ Ֆենիքս Դարբինյան
13	Հուշարձան Դերենիկ Դեմիրճյանի	1977 թ.	Արտաշիսյան փ. 52	S	Թիվ 27 համանուն դպրոցի առջև, քանդակագործ՝ Վ. Պետրոսյան, ճարտարագետ՝ Լևոն Ղալումյան
14	Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհված օդաչուներին	1985 թ.	Արշակունյաց պողոտա	S	Քանդակագործ՝ Մ. Ջաղացյանյան, Ճարտարագետ՝ Օ. Բերբերյան
15	Հուշարձան Լեոյի	1972 թ.	Ֆրունզեի փ. 56	S	Թիվ 65 համանուն դպրոցի առջև, Քանդակագործ՝ Հ. Մուրադյան, Ճարտարագետ՝ Շ. Ազատյան



№	Հուշարձանա-խումբը, հուշարձանը	Կառուցման ժամանակաշրջանը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը հանրապետական/տեղական	Ծանոթություն
16	Հուշարձան Ալեքսանդր Մյասնիկյանի	1959 թ.	Թամանցիների փ. 9	S	Թիվ 66 համանուն դպրոցի առջև, Քանդակագործ՝ Գրիգոր Ահարոնյան, Ճարտարագետ՝ Էդուարդ Սարապյան
17	Հուշարձան Մուրացանի	1955 թ.	Բագրատունյաց փ. 32	S	Թիվ 18 համանուն դպրոցի առջև, Քանդակագործ՝ Արա Հարությունյան, Ճարտարագետ՝ Ֆենիքս Դարբինյան
18	Հուշարձան Հովհաննես Ծիրագի	1992 թ.	Ծիրակի փ. 5-րդ նրբանցք	S	Թիվ 169 համանուն դպրոցի առջև
19	Որմնանկարներ	1974 թ.	Գարեգին Նժդեհի փ. 28	S	Մեքենաշինական տեխնիկումի շենքում, Նկարիչ՝ Մ. Ավետիսյան
20	Պանթեոն Կոմիտասի անվան զբոսայգու	1939 թ.	Արշակունյաց պողոտա 28/5	Հ	
21	Ցուցահանդեսային համալիր. "Ժողովրդական տնտեսության նվաճումներ" ("Արմէքսպո")	1961 թ.	Ծիրակի փ. 43	Հ	
22	Փողոցի կառուցապատման հատվածներ՝ Նորագավթի 1-ին փողոցը	19 դ. վերջ - 20 դ. սկիզբ	Նորագավթի 1-ին փ.	S	
23	Քաղաքատեղի Թեյշեբախի (Կարմիր բլուր)	մ.թ.ա. 12-9 դդ., 7-6 դդ.	Վերին Չարբախ թաղամաս, Կարմիր բլուր	Հ	Քաղաքի հվ-ամ կողմում, Հրազդանի ձախ ափին
24	Քանդակ "Կաշեգործ"	1965 թ.	Կույբիշևի փ. 18	S	Կաշվի գործարանի բակում, Քանդակագործ՝ Ս. Բաղդասարյան
25	Քարայր-կացարան "Երևան-1"	մուստերյան շրջան	Երևանյան լճի աջ ափին, սկզբնամասում	Հ	
26	Քարայր-կացարան "Երևան-2"	մուստերյան շրջան	Երևանյան լճի աջ ափին, սկզբնամասում	Հ	"Երևան-1"-ից 300 մ գետի հոսանքով դեպի վեր
27	Քարայր-կացարան "Երևան-3"	մուստերյան շրջան	Երևանյան լճի աջ ափին, սկզբնամասում	Հ	"Երևան-2"-ից 200 մ գետի հոսանքով դեպի վեր
28	Քարայր-կացարան "Կարմիր Բլուր-1"	մ.թ.ա. 7 դ., 15-16 դդ.	Արգավանդ գյուղից դեպի ձորն իջնող խճուղուց 200 մ գետի հոսանքով դեպի վեր	Հ	
29	Քարայր-կացարան "Կարմիր Բլուր-2"	մ.թ.ա. 7 դ., 15-16 դդ.	Արգավանդ գյուղի մոտերքում	Հ	Նախորդից 100 մ խճուղով դեպի վեր
30	Քարայր-կացարան "Կարմիր Բլուր-3"	մ.թ.ա. 7 դ., 15-16 դդ.	ՆԳ բարձրագույն դպրոցի շրջակայքում	Հ	Նախորդից 600 մ հեռու դեպի խճուղին,

№	Հուշարձանա-խումբը, հուշարձանը	Կառուցման ժամանակաշրջանը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը հանրապետական/տեղական	Ծանոթություն
					հայտնաբերված՝ 1967թ.
31	Քարայր-կացարան "Կարմիր Բլուր-4"	մ.թ.ա. 7 դ., 15-16 դդ.	ՆԳ բարձրագույն դպրոցի շրջակայքում	<	Նախորդից 10 մ հեռու դեպի խճուղին, խճուղու վերջում, հայտնաբերված՝ 1967թ.
32	Քարայր-կացարան "Կարմիր Բլուր-5"	մ.թ.ա. 7 դ., 15-16 դդ.	ՆԳ բարձրագույն դպրոցի շրջակայքում	<	Նախորդից 80 մ հեռու, հայտնաբերված՝ 1967թ.
33	Քարայր-կացարան "Շենգավիթ-1"	քարի դար, մ.թ.ա. 4-1 հազարամյակ		<	Կամրջի ամ կողմից 50 մ հվ, հայտնաբերված՝ 1967թ.
34	Քարայր-կացարան "Շենգավիթ-2"	քարի դար, մ.թ.ա. 4-1 հազարամյակ		<	Կամրջից հս, հայտնաբերված՝ 1967թ.
35	Քարայր-կացարան "Շենգավիթ-3"	մ.թ.ա. 4-1 հազարամյակ		<	Կամրջից հս, Շենգավիթ-2 քարայրից 30 մ հյուսիս, հայտնաբերված՝ 1968թ.
36	Քարայր-կացարան "Շենգավիթ-4"	մ.թ.ա. 4-1 հազարամյակ		<	Կամրջից հս, Շենգավիթ-2՝ քարայրի հարևանությամբ

Թվարկված պատմամշակութային հուշարձաններից ոչ մեկը չի գտնվող նախատեսվող գործունեության տարածքում կամ հարևանությամբ:

ՀՀ Կառավարության 2008թ.-ի օգոստոսի 14-ի թիվ 967-Ն որոշմամբ<sup>17</sup> հաստատված՝ ՀՀ բնության հուշարձանների ցանկի համաձայն, նախատեսվող գործունեության տարածքում բնության հուշարձաններ չկան:

## 7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

### 7.1 Նպատակը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման (այսուհետ՝ "ՇՄԱՆԳ") գործընթացի նպատակն է նույնականացնել բնապահպանական և սոցիալական (դրական և բացասական) ազդեցությունները/գործոնները և ազդվող միջավայրերը (ֆիզիկական, կենսաբանական, սոցիալական), ինչպես նաև հատկորոշել նախատեսվող գործունեության իրագործման այն գործոնները, որոնք շրջակա և սոցիալական միջավայրի վրա կթողնեն առավել ազդեցություն:

<sup>17</sup><https://www.arlis.am/documentview.aspx?docid=157090>

ՇՄԱՆԳ գործընթացում որոշվում են նախատեսվող գործունեության նշանակալի ազդեցությունները/գործոնները, որոնք շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմնական փուլում կենթարկվեն մանրամասն վերլուծության ու գնահատման և հետևաբար որոնց բացառման, նվազեցման և/կամ մեղմացման համար կմշակվեն համապատասխան միջոցառումներ:

## 7.2 Մեթոդաբանությունը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատումը կատարվում է հետևյալ մեթոդակարգով և հաջորդականությամբ՝

1. Նույնականացվում են նախատեսվող գործունեության իրագործման կենսափուլերը (արտադրության վերազինում/զարգացում),
2. Վերլուծվում են նախատեսվող գործունեության տեխնիկական լուծումները և բաղադրիչները,
3. Վերլուծվում են նախատեսվող գործունեության շրջանակներում իրականացվող աշխատանքները/միջոցառումները, ներառյալ՝
  - Օգտագործվող սարքավորումները և տեխնիկան,
  - Կիրառվող նյութերը և բնառեսուրսները, դրանց ծավալները,
  - Տևողությունը/ժամանակացույցը,
  - Առաջացող թափոնների, արտանետումների ու արտահոսքերի վտանգավոր հատկությունները, իսկ հնարավորության դեպքում նաև մոտավոր քանակները:
4. Որոշվում են նախատեսվող գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության գոտիները,
5. Նույնականացվում են շրջակա միջավայրի և սոցիալական այն բաղադրիչները, որոնք կարող են ազդվել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում, մասնավորապես՝
  - Ֆիզիկական միջավայրի տարրերը (կլիմա, օդային ավազան, ջրային և հողային ռեսուրսներ, երկրաբանական և հիդրոերկրաբանական կառուցվածք, տեսողական պատկեր, լանդշաֆտ և այլն),
  - կենսաբանական միջավայրը (կենդանական և բուսական աշխարհ, վտանգված տեսակներ, բնության հատուկ պահպանվող տարածքներ և այլն),
  - սոցիալական միջավայրը (սոցիալ-տնտեսական իրավիճակ, զբաղվածություն, բնակչություն, ազդակիր համայնքներ և ենթակառուցվածքներ, համայնքի և աշխատողների անվտանգություն, խոցելի խմբեր, պատմամշակութային ժառանգություն և այլն):

ՇՄԱՆԳ գործընթացում ուսումնասիրվում է նախատեսվող գործունեության շրջանակներում իրականացվող աշխատանքների/միջոցառումների ակնկալվող դրական կամ բացասական ներգործությունը վերը նշված 5-րդ կետում թվարկված ֆիզիկական, կենսաբանական և սոցիալական միջավայրերի վրա, ընդ որում այդ ներգործության աստիճանը դասակարգվում է ըստ հետևյալ հինգ մակարդակների (**Աղյուսակ 7.1**):

**Աղյուսակ 7.1 Ներգործության աստիճանները և դրանց նկարագիրը**

Ներգործության աստիճանը	Նշանակումը	Ներգործության նկարագիրը
Ներգործության բացակայություն	Բ	Ըստ նախնական գնահատման արդյունքների, նախատեսվող գործունեությունը չի ներգործի միջավայրերի վրա
Անտեսվող ներգործություն	Ա	Հավանաբար կլինի ներգործություն, սակայն, արդյունքը հազիվ թե ազդեցություն ունենա միջավայրերի ելակետային վիճակի վրա
Փոքր ներգործություն	Փ	Ներգործություն կլինի, սակայն դրա արդյունքը չնչին ազդեցություն կունենա միջավայրերի ելակետային վիճակի վրա
Միջին ներգործություն	Մ	Ներգործությունը որոշակի ազդեցություն կունենա միջավայրերի ելակետային վիճակի վրա
Նշանակալի ներգործություն	Ն	Ներգործությունը բավականին զգալի ազդեցություն կունենա միջավայրերի ելակետային վիճակի վրա
